

ՔԱՅ. «ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՄԻԱԿ ՈՒՂԻՆ
ՀԸՉՊԱՆԼԱՆ ԼԻԹԱՆԻ ԳԵՏԵՆ ՀԻՄՍԻՍ ՏԵՐԱՓՈԽԵԼՆ
ՈՒ ՉԱՅՆ ԱՊԱԶԻՆԵԼՆ Է»

Իսրայելի պետական պատկերասփիւռի կայանը հաղորդեց, որ Իսրայելի արտաքին գործոց նախարար Եհուդա Զաֆ Զաֆընը հաղորդեց, որ Իսրայելի արտաքին կարգավորման առաջարկը, եւ գինադադարի հաստատման պիտի չհամաձայնի»։
«Համաձայնության հասնելու միակ ուղին հղափառական Լիթանի գետնի հիսուս տեղափոխելն ու զայն ապագինելն է», շեշտած է Քաֆը։
«Լիթանան վերաբերեալ ՄԱԿ-ի Ապահովության խորհուրդի որոշումները ամբողջութեամբ գործադրելը գինադադարի հաստատման ուղին է», յայտնած է ան։
Իսրայելի նախագահ Իսհաք Րեբոնկ իր կարգին յայտնեց. «Հղափառային ընդհանուր քարտուղար սէյտ Յասան Նասրալլայի ահաբեկումը ճազմավարական որոշում է, եւ կարիքը ունիք քաղաքական հոլովոյթի մը, որ շրջանը փոխող հորիզոններ կը բանայ եւ կ'արտօսէ կազմութիւնը դաշինքներու, որոնք մենք կը ձգտենք»։

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԿԱՅՈՒՆԱՅՄԱՆ
ԳՈՐԾՕՆԻ ԱԻԱՐՏԸ ԿԱՄ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Ժամանակաշրջանի մը արարող կը բնութագրուի յետնադարձական կացութիւնը, եթէ գործընթացները այնպէս ընթանան, որ ճազմաքաղաքական թէ անվտանգային առումներով քաղաքական նոր քարտէսագծում կատարուի Լիթանի շուրջ եւ Լիթանի մէջ։

Տարածաշրջանային ուժի վերածուած հղափառական վճռորոշ դերակատարութիւն ունեցաւ ոչ միայն Լիթանի, այլ նաեւ Սուրիոյ եւ Իրաքի մէջ։ Որքան ալ Իրանի արտադարձային ստորաբաժանումը նկատուի անկախ, այդուհանդերձ յատկապէս ընդհանուր քարտուղարին ունեցած դերակատարութեամբ Լիթանը շեղեցուցեցաւ տարածաշրջանային պատերազմի եւ յատկապէս քաղաքացիական բախումներու մէջ։

Աւելի ընդհանուր դիտարկում մը կրնայ նկատել, որ Լիթանի գլխաւոր երկու համայնքներու՝ սիւնի եւ շիի, ամենէն հիմնական ուժերու դէմքերը չեզոքացուցեցան համայնք-քաղաքական ներկայացուածութիւն միաւորի երեւոյթը ջլատելու նպատակը հետապնդելով։ Եթէ աշխարհի տարածքին զաղափարաբանութիւններ կրող դասական կուսակցութիւններու նստացման երեւոյթն է, որ կը տարածուի, Լիթանի պարագային համայնքային-քաղաքական միաւորի վերածուած ուժերու դերակատարութիւնը կը հարուածուի, տեղի տալով քաղաքական պարագայութեան մը։ Սիւնի եւ շիի համայնքներէն առաջ կարելի է տալ օրինակը այս պարագային քրիստոնեայ ուժերու համախմբումին եւ անկէ դէպի համալիթանանեանի անցում կատարելու փորձ կատարող ղեկավարի սպանութեան։ Այլ պայմաններու եւ հանգամանքներու մէջ տիրոջներու թիւ մէկ ներկայացուցիչին ահաբեկման։ Շիիներու պարագային անհետացման ճակատագիրին կ'ենթարկուէր շիիները համախմբելու կարողութիւն ցոյց տուած կրօնաւորը։ Ահա այստեղ է, ի տարբերութիւն միւս համայնքներուն, որ համայնքի համախմբութեանը աւելի կազմակերպ եւ ճազմաքաղաքական միաւորի բոլոր ստորոգծիչներով տեղական շրջանային ուժի վերածեց հղափառ կուսակցութիւնը, որուն մէջ վճռորոշ դերակատարութիւն ունեցաւ չորս օր առաջ Իսրայելի կողմէ սպաննուած սէյտ Նասրալլան։

Իսրայելեան եւ արեւմտեան քարոզչութիւնը ահաբեկութեան դասակարգումին տակ տեղադրեց անոր ղեկավարած կուսակցութիւնը։ Խնամքով անուշադրութեան մատուցեցաւ այն, որ Սուրիոյ մէջ հղափառական պատերազմեցաւ ՏԱՀԵՇ-ի դէմ, պաշտպանեց հարաւային Լիթանի մէջ ապրող այլ համայնքապատկան բնակչութիւնները, ներլիթանեան մակարդակի վրայ առաջադրեց երկխօսութիւն, եւ միշտ յորդորեց հեռու մնալու սաղորանքներէ եւ ներքին բախումներէ։

Ուշագրաւ է այս օրերուն այն երեւոյթը, որուն համաձայն, քաղաքականութեան տարակարծիք զրտնուող ուժերու ներկայացուցիչներ կը խօսին Նասրալլայի կայունացման գործին հանդիսացած ըլլալու մասին։ Անոնք յայտարարելով հանդերձ, որ համաձայն չեն ճազմաքաղաքական միաւորի գոյութեան, դէպի Իսրայել գինադադար գործողութիւններ նախաձեռնելով պատերազմը դէպի Լիթանի տեղափոխելու ընտրանքին, յայտարարեցին, որ Լիթանի կորսնցող միջնամայնքային համակցութեան հաւատացող եւ ներլիթանեան համերաշխութեան կողմնակից հեղինակութիւն մը։ Աւելին. համալիթանեան պաշտպանողականութեան առումով՝ ծածկոյթ մը։ Այս վարքագիծն է, որ պետք է շարունակէ բնորոշել իր ղեկավարած կուսակցութեան քաղաքականութիւնը։ Երկխօսութիւնը շարունակելու, հարցերուն քաղաքական լուծում տալու, միաւորուելու եւ արտաքին թշնամիին դիմակայման որոշումներուն եւ անոնց գործնականացման մէջ միասնական մնալու։

Աւելորդ պիտի չըլլար մէկ դիտարկում եւս նշելը։ Հղափառական գլխաւոր հակառակորդներէն է Իսրայելի եւ կը նկատուի անոր զսպիչ ուժերէն մէկը։ Իսրայելի գերակայութիւն հաստատելը մեծ հաշուով չի բխիր հայկական շահերէն։ Արցախի պատերազմին հայկական կողմը պատերազմեցաւ Թուրքիա-Ազրպէյճան-Իսրայել եռակնի դէմ։ Ազրպէյճանի հետ ամեն տեսակի գործակցութիւն խորացնող Իսրայելի հզօրացումը սպառնալիք է մեր հայրենիքին, յատկապէս Ազրպէյճանը սպառնալիքներ իր աշխուժ դնելով։ Նասրալլայի մղած պայքարը Իսրայելի դէմ այս նկատառումները եւս կրնայ ներառել, հայկական ոսպնեակի գործարկման պարագային։

Պարզ է, որ նոր ծրագիրներ կը մշակուին եւ գործի կը դրուին տարածաշրջանին եւ Լիթանի մէջ։ Փոթորկոտ այս շրջանին եւ ճազմագործողութիւններու այս պայմաններուն մէջ, բոլոր ժամանակներէն աւելի, հրամայական է գերզպաւորութիւնը, կայունութեան պահպանումը եւ մերժումը տարբեր շրջանակներէ առաջ մղուող սաղորանքներու ներքաշումին։

Կայունացման գործին գլխաւոր միջոց ուժը չեզոքացած է։ Այդ առաքելութիւնը շարունակելու հրամայականին առջեւ է ոչ միայն իր կուսակցութիւնը, այլ նաեւ Լիթանի քաղաքական ողջ դաշտը։

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕԴՈՒԺԸ 7-ՐԴ ՕՐԸ
ԸԼԼԱԼՈՎ ՇԱՐՈՒՆԱԿԵՑ ԼԻԹԱՆԻ
ՎՐԱՅ ԻՐ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ. ՅԱՄԱՔԱՅԻՆ
ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ՄՕՏԱԼՈՒՄ



Իսրայելեան օդուժը 7-րդ օրն ըլլալով շարունակեց Լիթանի վրայ իր օդային յարձակումները եւ միեւնոյն ժամանակ շարունակեց ցամաքային ներխուժման պատրաստութիւնները։
Իսրայելեան օդուժը երեկ արշաւոյսին յարձակում գործեց Պերլուքի Զոլա շրջանին վրայ։ Պարտիստիկ ազատագրութեան ժողովրդային ճակատը յայտարարեց, որ յարձակումին հետեւանքով իր ղեկավարներէն երեքը մահացած են։
Իսրայելեան օդուժը նաեւ յարձակում կուս կատարեց Սուրիոյ հետ ժողովրդական զորքերի վրայ։

ՇԵՅԽ ՔԱՍԵՄ. «ՊԱՏՐԱՍ ԵՆՔ ՈՐԵԷ
ԿԱՐԵԼԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏՐԱՍ ԵՆՔ
ՅԱՄԱՔԱՅԻՆ ՃԱԿԱՏՈՒՄԻՆ, ՈՐՄԷ ՅԱՂԹԱԿԱՆ
ԳՈՒՐՄ ՊԻՏԻ ԳԱՆՔ»

Հղափառային ընդհանուր քարտուղարի տեղակալ շէյխ Նայիմ Զասեմ երեկ պատկերասփռուած ուղերձի մը ընթացքին յայտնեց. «Կորսնցուցիք Նասրալլան, այն մեծ մարդը, որ պատերազմի դաշտը չլքեց»։

Ան խօսքը հղափառային մարտիկներուն ուղղելով ըսաւ. «Իմացէ՛ք, որ Նասրալլան միշտ եւ յաւիտեան մեր մէջ է»։

«Իսրայելացի թշնամիին նշածին հակառակ Նասրալլայի հետ քսան ղեկավարներու ժողով կ'ար», ըսաւ ան՝ նշելով. «Մեր ղեկավարը՝ ընդհանուր քարտուղար Նասրալլան կորսնցուցիք, ինչպէս նաեւ նախատակ կ'ի Զաֆին եւ (Իրանի) Յեղափոխութեան պահակագունդէն Ապպաս Նեֆիզան»։



Շէյխ Զասեմ յայտարարեց. «Ամեն մօտ առիթին նոր ընդհանուր քարտուղար մը պիտի ընտրուի մեքանիզմներուն համաձայն, եւ ընտրանքները դիւրին ու յստակ են»։

«Կը շարունակենք ղեկավարել ու վերահսկել կուսակցութեան կառույցին համաձայն, եւ իւրաքանչիւր ղեկավար փոխարինող ունի, եթէ ան վիրատուի», ըսաւ ան։

Շար.ը՝ էջ 6

ՌՈՒՄԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ՄԻԽԱՅԻԼ
ՄԻՇՈՒՄԹԻՆ ԱՅՍՕՐ ՀԱՅԱՍՏԱՆ
Կ'ԱՅՅԵԼԷ

Ռուսիոյ վարչապետ Միխայիլ Միշուսթին 1 հոկտեմբերին պիտի հասնի Հայաստան, ուր պիտի մասնակցի Եւրասիական միջկառավարական խորհուրդի նիստին եւ Եւրասիական տնտեսական ընդհանուր ժողովի լիազուժար նստաշրջանին։ Այս մասին կը յայտնէ Ռուսիոյ կառավարութեան մամուլի ծառայութիւնը։

Նիստի ընթացքին Ռուսիոյ, Հայաստանի, Պօլոնիոյ, Ղազախստանի եւ Խորհրդային տնտեսական ինքնիշխան ժողովի լիազուժար նստաշրջանին։ Այս մասին կը յայտնէ Ռուսիոյ կառավարութեան մամուլի ծառայութիւնը։



Բացի ատկէ, կառավարութիւններու ղեկավարները պիտի ընտրուին մինչեւ 2023 թուականը Եւրասիական տնտեսական միութեան ծիրին մէջ արդիւնաբերական համագործակցութեան հիմնական ուղղութիւնները։

ՅԱԿՈՔ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ.
«ՊԵՏՔ Է ԱՄԵՆ ԻՆՉ
ԸՆԵՆՔ, ՈՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ
ՄԻՇՏ ԱՄՈՒՐ ՄՆԱՅ»



«Ամեն հայու համար Միւռնօրինքը յատուկ նշանակութիւն ունի՝ իբրեւ եկեղեցւոյ ամենէն խորհրդողանշական արարողութիւններէն մէկը։ Նոյնինքն սրբալոյս միւռնօն է, որ կը բաշխուի մեր բոլոր եկեղեցիներուն, որ հայ երեխաները նաեւ կ'ընդունեն իբրեւ Հայ առաքելական եկեղեցւոյ հետեւորդներ։ Ատոր համար ալ շատ ուրախ եմ, որ այստեղ ներկայ եմ, ու միաժամանակ Մայր տաճարի վերածման

Շար.ը՝ էջ 8

ԱՐՑԱԽԻ ՀԱՅԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁ
ԱՊԱՅՈՎԵԼՈՒ ԱՆՀԱԺԵՏՈՒԹԵԱՆ
ԸՆՆԱՐԿՈՒՄ



Ամերիկեան պետութիւններու կազմակերպութեան ընդհանուր քարտուղար Լուիս Ալմակրօ ընդունած է Ընկերվար միջազգայնականի փոխնախագահ եւ Արցախի ժողովուրդի հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան կոմիտէի անդամ Մարիօ Նալպանտեանը։

Այս մասին «Էքս»-ի մէջ յայտնած է Լուիս Ալմակրօ։

Ան նշած է, որ Մարիօ Նալպանտեանի հետ քննարկած են տեղահանուած հայերու վերադարձը Արցախ ապահովելու անհրաժեշտութիւնը, հայ ռազմական եւ քաղաքական գերիներու ազատ արձակումը եւ Արցախի մէջ Ազրպէյճանի կողմէ հայկական մշակութային ժառանգութեան ոչնչացման դադրեցումը։

ՄԱԿ-Ի ՅԱՏՈՒԿ ՉԵԿՈՒՑՈՐԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՏԱՆԻԸ
ԿԸ ՅՈՐԴՈՐԷ ԱՐՑԱԽԵՆ
ՏԵՐԱԿԱՆՈՒԹՆԵՐՈՒՆ ԶԱՅՆԸ
ԼՍԵԼԻ ԴԱՐՁՆԵԼ



Ճշմարտութեան, արդարութեան, հատուցման եւ չլրկնուելու երաշխիքներու խթանման հարցերով ՄԱԿ-ի յատուկ գեկուցող Ֆապիան Սալվիոլին իր գեկուցումին մէջ անդրադարձած է Արցախի մէջ Ազրպէյճանի կողմէ գործուած ցեղային զտումներուն, բռնի տեղահանումած անձներուն։

«Արմէնիդեան»-ի համաձայն, Լեռնային Ղարաբաղի փախստականներու իրաւապաշտպան միութիւնը ներկայացուցած է Սալվիոլիի՝ 16-էն 24 Նոյեմբեր 2023-ի Հայաստան կատարած այցելութեան վերաբերեալ գեկուցումը։

ՄԱԿ-ի յատուկ գեկուցողը իր գեկուցումին մէջ անդրադառնալով Արցախի մէջ Ազրպէյճանի կողմէ

Շար.ը՝ էջ 6

ՊԱՅՏԸՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵ ՇՐՋԱՆԻՆ ՄԵՋ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՊԱՏԵՐԱԶՄԵ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ



Միացեալ Նահանգներու նախագահ Ժո Պայտըն յայտնեց, որ պէտք է Միջին Արեւելքի մէջ համապարփակ պատերազմէն խուսափիլ: Այս մասին հաղորդեց «Ռոյթըրզ» լրատու գործակալութիւնը:

Պայտըն յայտնեց, որ Իսրայէլի վարչապետ Պենիափին Նեթանիախի հետ պիտի խօսի, առանց որ այդ խօսակցութեան ժամկետը նշէ:

Սպիտակ տան ղեկավարը լրագրողներուն յայտնեց. «Երբ անոր հետ խօսիմ, ձեզ տեղեակ պիտի պահեմ»:

Պատասխանելով շրջանային տագնապէ խուսափելու անհրաժեշտութեան մասին լրագրողի մը հարցումին՝ Պայտըն ըսաւ. «Ատիկա անպայման պէտք է, պէտք է իրապէս անկէ խուսափիմք»:

Սպիտակ տան Ազգային անվտանգութեան խորհուրդի բաւեր ճոն Զորպի «Սի.Էն.Էն.»-ի հետ հարցազրոյցի ընթացքին այս առումով ըսած էր, թէ դէպի համապարփակ պատերազմ առաջնորդող մագլցումը Իսրայէլին թոյլ պիտի չտայ իրագործել իր յայտարարած նպատակը՝ հիւսիսի տեղահանութենէն իրենց տուններ վերադարձնելը:

Ան նշած էր, որ իր երկիրը կը հետեւի, թէ Իրան ինչ պիտի ընէ, եւ պատրաստ է ինքզինքն եւ Իսրայէլը պաշտպանելու:

ՔԵՆԱՆԻ. «ՄԻՈՆԱԿԱՆ ՈՃԻՐՆԵՐԸ ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՊԻՏԻ ԶՄԱՆ, ԵՒ ԼԻԲԱՆԱՆ ՈՒ ԿԱԶԱ ԿՈՌԻՈՂՆԵՐ ՊԻՏԻ ԶՈՒՂԱՐԿԵՆՔ»



Իրանի արտաքին գործոց նախարար Նասր Զեհանի յայտարարեց. «Հրգապալայի ընդհանուր քարտուղար սեյիտ Հասան Նասրալլայի եւ Յեղափոխական պահակազունի մէջ խորհրդակցական գնդապետ-գործակար Ապպաս Նէֆթոյանի ահաբեկումը միջազգային եւ շրջանային անվտանգութեան ու կառավարչական սպառնալիք են եւ միջազգային օրէնքներու ոտնակոխում»:

«Այս ոճրային քայլերուն շարունակումը կրնայ շրջանը անկայուն կացութեան մէջ ներքաշել», նշեց ան:

«Թեհրան Իսրայէլի դիմակայման համար Լիբանան եւ Կազա կոռուներ պիտի չուղարկէ», մամլոյ ասուլիսի ընթացքին ըսաւ Իրանի արտաքին գործոց նախարարութեան բաւերը՝ աւելցնելով. «Լիբանանի եւ Պաղեստինի կառավարութիւնները բաւարար կարողութիւնն ու ուժը ունին սիւնական վարչակազմի յարձակումին դիմակայման համար, եւ կարիքը չկայ օժանդակ կամ կամուր իրանեան ուժեր տեղակայելու»:

«Սիւնական գոյացութեան արարքներն ոչ մէկը առանց հակադարձութեան կամ յանդիմանութեան եւ գործած ռճիրներուն համար առանց պատիժի պիտի մնան, եւ Իրան այս առումով պատշաճ ու վճռական բոլոր քայլերը պիտի որդեգրէ», շեշտեց Զեհանի:

Միւս կողմէ, «Նիւ Եորք Թայմզ» հաղորդեց, որ իրանեան վարչակարգը Հրգապալայի ընդհանուր քարտուղար սեյիտ Հասան Նասրալլայի ահաբեկումէն ետք մեծ ցնցում ապրած է՝ նշելով, որ Իրանի գերագոյն իրաւունքը պէտք է պարզապէս սեյիտ Ալի Խամենեյին սուգի մէջ էր եւ մեծապէս ազդուեցաւ սեյիտ Նասրալլայի կորուստէն, սակայն հանդարտ ու գործնական կեցուածք որդեգրեց:

Օրաթերթը հաղորդեց, որ սեյիտ Նասրալլայի մահուան լուրը ստանալէ ետք Խամենեյին նախագահած է Ազգային անվտանգութեան բարձրագոյն խորհուրդի ժողովի մը, որուն ընթացքին տարակարծութիւն ստեղծուած է Իսրայէլին պատշաճ հակադարձութեան շուրջ՝ նշելով, որ մինչ պահպանողականները կոչ ուղղած են Իսրայէլին արագօրէն հակադարձելու, Իրանի նախագահ Մասուտ Փեզեշքիան զգուշացուցած է աճապարելէ՝ նշելով, որ ատիկա կրնայ Իրանը Իսրայէլի վարչապետ Պենիափին Նեթանիախի թակարդը ձգել:

«Նիւ Եորք Թայմզ» կը նշէ, որ ներկայ փուլին Հրգապալային իր ուժն ու կազմակերպութեան ընդունակութիւնը վերականգնելու օգնելու Իրանի համար առաջնահերթութիւն կը նկատուի: Իրան նաեւ կը ծրագրէ «Զուտե» գործիքները հրամանատար մը Պէյրութ ուղարկել՝ օգնելու համար վերականգնման ջանքերուն:

Այս զարգացումներուն լոյսին տակ, ըստ օրաթերթին, իրանցի պաշտօնատարները ընդունած են, թէ Իսրայէլի հարուածը շատ զօրաւոր էր, իսկ իրանեան շրջանակները «ցնցուածութեան, զայրոյթի եւ մտահոգութեան» կացութեան մէջ են:

ՄԻԲԱՐԻ. «ՊԵՐԻԻ ԻՆՇԻ ԶԱՅՏՆԵՑ, ՈՐ ԶԻՆԱԳԱԿԱՐ ՀԱՍՏԱՏՈՒԵԼԷՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԵՏՔ ԽՈՐՀՐԱՐԱՐԱՆԸ ՊԻՏԻ ՀՐԱԽԻՐՈՒԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԿԱՆ ԵՒ ՈՉ ԹԵ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐ ԿԱՐԳԱՅՈՂ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐԵԼՈՒ»

Լիբանանի վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի երէկ կէսօրին այցելեց խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրիի, որուն հետ հանդիպումէն ետք յայտնեց, թէ Պըրրիի հետ «կարեւոր ժողով մը» գումարած է:

Ան ցաւակցութիւն յայտնած է Հրգապալայի ընդհանուր քարտուղար սեյիտ Հասան Նասրալլայի նահատակութեան եւ բոլոր նահատակներուն համար, ինչպէս նաեւ խորհրդարանի նախագահը դրած է Նիւ Եորքի մէջ իր դիւանագիտական աշխատանքներուն մթնոլորտին մէջ:

«Այս հանդիպումին ընթացքին վերահաստատեցինք Նիւ Եորքի մէջ մեր արտայայտած դիրքորոշումը, որ ամփոփ կերպով յանձնառութիւնն է Միացեալ Նահանգներու, Ֆրանսայի, Եւրոպական Միութեան, Ճափոնի, Մեծ տական Արաբիոյ, Զաթարի, Գերմանիոյ, Աւստրալիոյ, Զանաւայի եւ Իտալիոյ կողմէ հրապարակուած կոչին: Բոլոր այդ պետութիւնները հաղորդագրութիւն մը հրապարակեցին, եւ մենք՝ իբրեւ կառավարութիւն, խորհրդարանի նախագահ Պըրրիի հետ հաղորդակցելէ ետք, կը վերահաստատենք մեր խոստումը գործադրելու հաղորդագրութեան մէջ տեղ գտած իւրաքանչիւր կէտ, որոնց շարքին է անմիջապէս զինադադար հաստատելը՝ սկսելու համար թիւի 1701 որոշումի ամբողջական գործադրութեան քննարկումին», ըսաւ վարչապետի պաշտօնակատարը:

«Մենք կ'որոշուենք այն բոլոր կէտերը, որոնք տեղ գտան կոչին մէջ, եւ կը խոստանանք զայն անմիջապէս գործադրել: Այս է լիբանանեան պաշտօնական կեցուածքը, որ կոչի հրապարակումէն անմիջապէս ետք հրապարակուած հաղորդագրութեան մը մէջ յայտնեցի, եւ այսօր խորհրդարանի նախագահ Պըրրիի հետ ժողովէն ետք, դարձաւ կը հաստատեմ այս կոչին վերաբերեալ մեր կեցուածքը», անցուց ան:

«Այս հարցը շատ կարեւոր է, եւ մենք պատրաստ ենք թիւ 1701 որոշումը գործադրելու, եւ անմիջապէս որ կրակոցը դադրեցուի, պատրաստ ենք բանակը ուղարկելու Լիբանանի գետի հարաւը գտնուող շրջան, որպէսզի իր ամբողջական առաքելութիւնը կատարէ հարաւային Լիբանանի մէջ միջազգային խաղաղապահ ուժերուն հետ համակարգաբար», ըսաւ Միքաթի:

Նշենք, որ Միքաթի Այն Ռիւնէ այցելութենէն կարճ ժամանակ ետք, լիբանանեան բանակի հրամանատար գործադրէ Անի իր կարգին այցելեց Այն Ռիւնէ, ուր հանդիպում ունեցաւ Պըրրիի հետ:

Միքաթի աւելցուց. «Նաեւ քննարկեցինք ներքին նիւթերը, մասնաւորաբար տեղահանութենէն նիւթը, որ խորհրդարանի նախագահ Պըրրիին կը անդադրեց: Ան նախանձախնդիր



եր ապահովելու բոլոր պէտք եղածը: Անոր բացատրեցի կառավարութեան մօտ գոյութիւն ունեցող տուեալները, մասնաւորաբար այն աշխատանքները, զորս կը կատարէ հարաւային Լիբանանէն, Հարաւային արաւարձաններէն, Պեշաւայէն, Պապլայէն եւ բոլոր շրջաններէն այսպէս մեծաթիւ ներքին տեղահանութենէն գոյութեան պայմաններուն մէջ:

«Մենք կարելի եղածին չափ կը փորձենք այդ բացերը գոցել, ինչպէս երէկ ըսի, անկէպ դիւրին բան չէ, որովհետեւ կը սկսի պատսպարման վարքեր գտնելով, կենցաղային պայմաններու, սննդեղէնի եւ պատսպարման շէնքերուն մէջ առողջապահական եւ ապահովութեան բոլոր պայմանները գտնելով, եւ վաղը առտու առաւօտեան ժամը 7:00-ին նուիրատու երկիրներուն հետ պիտի գումարեմ ժողով մը՝ ի նպաստ Լիբանանի օգնութիւն խնդրելու համար»:

«Մենք բոլոր նուիրատուութիւնները կ'ընդունինք, զանոնք խնդրեցինք եւ այսօրուան ժողովի ընթացքին խորհրդարանի նախագահ Պըրրիի եւ եւ յայտնեցինք, որ այս բոլոր օգնութիւնները ՄԱԿ-ի ճամբով պիտի գան, եւ ան է, որ զանոնք թափանցիկ կերպով պիտի ցրուէ, որովհետեւ կ'ուզենք, որ այդ օժանդակութիւնները այս դժուար կացութեան մէջ կարիքաւոր լիբանանցիներուն հասնին»:

«Կառավարութիւնը իր դերը կը կատարէ, եթէ որեւէ որոշում կարիք ըլլայ, ապա խորհրդարանի նախագահ Պըրրիին գորակցութիւն յայտնեց կառավարութեան՝ որդեգրելու համար յառաջանալիք բոլոր խոչընդոտները շրջանցելու յարմար որոշումը», յայտարարեց Միքաթի:

«Խօսեցանք նաեւ նախագահական իրավունքին եւ ամենէն մօտիկ ժամանակին հանրապետութեան նախագահ ընտրելու կարելութեան մասին: Խորհրդարանի նախագահ Պըրրիին հանդիպումի ընթացքին ինծի յայտնեց, որ զինադադարի հաստատումէն անմիջապէս ետք խորհրդարանը պիտի հրապարակէ համաձայնական եւ ոչ թէ մարտահրաւեր կարողացող նախագահի մը ընտրութեան: Անկէպ այն դրական բաներն է, որոնցմէ պէտք է կարելի եղածին չափ շուտ օգտուիմք՝ սահմանադրական կառոյցներու մէջը շտկելու եւ ժողովի գումարումը ամբողջացնելու, հանրապետութեան նոր նախագահ ընտրելու եւ նոր կառավարութիւն կազմելու համար», ըսաւ վարչապետի պաշտօնակատարը:

ՊԱՐՐՈ. «ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԻՆԵԱԼ ԲԱՆՈՒՄՆԵՐՈՒ ԳԱԿՐԵՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԵՇՏԵՆՔ»



Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժան Նոել Պարրո իր պատուիրակութեան եւ Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Էրվէ Մակրոյի ընկերակցութեամբ այցելեց Պեշեքէ, ուր հանդիպում ունեցաւ մարոնիներու Ռայի պատրիարքին հետ:

Պեշեքէի տեղեկատուական գրասենեակի պատասխանատու Ուալիտ Ղալիատ յայտնեց. «Պարրոյի այցելութիւնը զօրակցական, տեղեկահաւաքի եւ հիմնական թղթածրարները յառաջ մղելու համար է»:

Ան նշեց, որ Պարրո իր գրոյցի ընթացքին կեդրոնացած է հանրապետութեան նախագահի ընտրութեան իբրեւ հիմք եւ առաջնահերթութիւն կարեւորութեան վրայ՝ ընդգծելով պատերազմը դադրեցնելու անհրաժեշտութիւնը:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը նաեւ այցելեց վարչապետարան, ուր հանդիպում ունեցաւ վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթիի հետ: Վերջինս վերահաստատեց, որ լուծումի բանալին Լիբանանի վրայ խորայնեան յարձակումի դադրեցումն է եւ Միացեալ Նահանգներու ու Ֆրանսայի զինադադարի հաստատման վերաբերեալ կոչին վերադառնալն է:

«Առաջնահերթութիւնը ՄԱԿ-ի թիւ 1701 որոշումի գործադրումն է», ըսաւ ան:

Ֆրանսական դիւանագիտութեան պետը իր կարգին շեշտեց «հանրապետութեան նախագահի ընտրութեան եւ զինեալ բախումները դադրեցնելու վրայ աշխատանքի առաջնահերթութիւնը»:

«Ֆրանսան բոլոր մակարդակներուն վրայ կը գորակցի Լիբանանին ու անոր ժողովուրդին, եւ մեծապէս հետաքրքրուած է բանակին աջակցելով եւ այս զգայուն պայմաններուն մէջ անոր օգնելով», շեշտեց Պարրո:

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարը այցելեց լիբանանեան բանակի հրամանատար գործադրէ Անի: Քննարկումը կեդրոնացաւ Լիբանանի վրայ շարունակուող խորայնեան յարձակումին լոյսին տակ երկրի ընդհանուր կացութեան վրայ:

Խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի Այն Ռիւնէ-ի մէջ Պարրոյի հետ իր հանդիպումի ընթացքին Նորհակալութիւն յայտնեց Ֆրանսային ու անոր նախագահ Էմանուէլ Մաքրոնին Լիբանանին նկատմամբ նախանձախնդրութեան եւ աջակցութեան համար, մասնաւորաբար ներկայ դժուար փուլին մէջ, ուր Իսրայէլ իր յարձակումը կը շարունակէ եւ շրջափակում հաստատած է Լիբանանի վրայ՝ արգիլելով տեղահանութենէն օժանդակութիւններ հասցնելը:

Պըրրի Պարրոյի ուշադրութեան յանձնեց Լիբանանի դրական կեցուածքը Ֆրանս-ամերիկեան կոչին նկատմամբ, որ միջազգային լայն աջակցութիւն կը վայելէ:

«Յարձակումի դադրեցման ձգտող բոլոր ջանքերուն տապալման պատասխանատուն Իսրայէլն է», նշեց Պըրրի:

Ֆրանսական դիւանագիտութեան պետը իր կարգին համաձայն գտնուեցաւ Պըրրիին եւ յայտնեց. «Միակ լուծումը ՄԱԿ-ի թիւ 1701 որոշումի գործադրութիւնն է»:

Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպանատունը հաղորդագրութիւն մը հրապարակելով հաղորդեց, որ Պարրո Լիբանանի առողջապահութեան նախարար Ֆիրաս Ապիատին յանձնած է 12 թոն դեղորայք ու բժշկական սարքեր, ինչպէս նաեւ 10 միլիոն եւրօ արժողութեամբ մարդասիրական շտապ օգնութիւններու մատակարարման ձեռնարկած է:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

ՍԵՆՏՏԱԿԱՆ

Արաբիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ թագաւորութիւնը մեծ մտահոգութեամբ կը հետեւի «եղբայրական լիբանանեան հանրապետութեան մէջ ընթացող զարգացումներուն եւ կ'ընդգծէ Լիբանանի գերիշխանութիւնն ու շրջանային անվտանգութիւնը պահպանելու կարեւորութիւնը»՝ նշելով, որ թագաւորութիւնը լիբանանցի ժողովուրդին կողքին կը կանգնի ընդդէմ այդ զարգացումներու հետեւանքներուն եւ կարելու կը նկատէ անոնց մարդասիրական հետեւանքները սահմանափակելը:

Նախարարութիւնը նշեց, որ թագաւորութեան ղեկավարութիւնը ցուցմունք տուած է լիբանանցի ժողովուրդին բժշկական ու մարդասիրական օժանդակութիւններ տրամադրելու եւ «ներկայ դժուար պայմաններուն մէջ անոր կողքին կանգնելու»:

●ԵՄԻՐԱԹԱԿԱՆ լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ Արաբական Միացեալ Եմիրութիւններու նախագահ Սոհմմէտ ալ զեյ 2-րդ Ալ Նախիան հրամայած է լիբանանցի ժողովուրդին 100 միլիոն տոլար արժողութեամբ մարդասիրական շտապ օգնութիւններ տրամադրել: «Այս նախաձեռնութիւնը Լիբանանի մէջ մեր եղբայրներուն աջակցելու, ներկայ մարտահրաւերներու դիմակայման մէջ անոնց օգնելու եւ եղբայրական լիբանանցի ժողովուրդին զօրակցելու Արաբական Միացեալ Եմիրութիւններու հաստատ յանձնառութեան ծիրին մէջ է»:

●ԱՆԿԻՆ վարչապետ Սաատ Հարիրի ողջունեց Լիբանանի ու լիբանանցիներուն օգնելու արաբական նախաձեռնութիւնները՝

շնորհակալութիւն յայտնելով Արաբական Միացեալ Եմիրութիւններու նախագահ Սոհմմէտ ալ զեյ 2-րդին լիբանանցի ժողովուրդին 100 միլիոն տոլար արժողութեամբ շտապ մարդասիրական օժանդակութիւններ տրամադրելուն համար:

Ան նաեւ լիբանանցիներու գնահատանքը արտայայտեց Մեծ տական Արաբիոյ արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան եւ բժշկական ու մարդասիրական օժանդակութիւններ տրամադրելու Մեծ տական Արաբիոյ ղեկավարութեան ցուցմունքներուն:

●ԶԱՆԴԱՅԻ վարչապետ Ճապիլ Թրուտուն հեռաձայնեց վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթիի եւ զօրակցութիւն յայտնեց Լիբանանին՝ խոր մտահոգութեան յայտնելով «քաղաքայինները թիրախ դարձնող բախումներուն նկատմամբ» եւ շեշտելով, որ պէտք է մագլցումը դադրեցնել եւ վերադառնալ խաղաղ լուծումներու:

●ՄԱԿ-ի գաղթականներու հարցով բարձրագոյն յանձնակատար Ֆիլիփո Կրանտի յայտնեց. «Շուրջ 100 հազար մարդիկ Լիբանանէն փախուստ տուին դէպի Սուրիա՝ խուսափելով իսրայէլեան յարձակումներէն»:

«Իսրայէլեան յարձակումներն փախելով Լիբանանէն Սուրիա անցած լիբանանցի եւ սուրիացի անձերու թիւը հասաւ 100 հազարի», ըսաւ ան՝ աւելցնելով. «Յոսքը կը շարունակուի»:

●ԸՆԴՀԱՆՈՒՐ ապահովութեան ընդհանուր տնօրէնութենէն աղբիւր մը «Ախպար» օրաթերթին. «Մէյ շաբաթ ի վեր Մասնային սահմանային անցակետին ճամբով մեկնողներուն թիւը հասաւ 90 հազարի, որոնց 60 հազարը սուրիացիներ են, իսկ 30 հազարը՝ լիբանանցիներ»:

●ԼԻԲԱՆԱՆԵԱՆ բանակը յայտարարեց, որ լիբանանցի զինուոր մը նահատակուած է, երբ անօդային թռչող սարք մը բանակի Օմրա-Ուազզանի շրջանի անցարգելին մօտ **մոթոսիքելի** մը վրայ յարձակում գործած է:

ՕՐՈՒԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Լիբանանի դեմ շղթայագերծուած պատերազմը արդէն մտած է վտանգաւոր փուլ։ Լիբանանցի քաղաքացին պատերազմի արհաւիրքին մէջ կ’ապրի անորոշութեան ճնշող ուրուականին տակ, եւ բնականաբար հարցականներու նոր շղթայ մը կ’անած է իր առօրեան։

Ա.- Սէյիտ Նասրալլայի նահատակութենէ ետք ի’նչ ուղղութիւն պիտի ստանայ 3ըգպալլայի դերաւկատարութիւնը՝ լիբանանեան եւ շրջանային առումներով։

Բ.- Իսրայէլի կողմէ արդեօք ցամաքային ներխուժման սպառնալիքը եւ պատերազմի կանոնները փոխելու ու զայն շատ աւելի լայնածաւալ դարձնելու հաւանականութիւնները որքա’ն իրատեսական են։

Գ.- Մէլ միլիոն հաշուող գաղթականութեան նախատեսութիւնը, որ աննախընթաց է մարդկային ի’նչ աղէտներու դիմաց պիտի կանգնեցնէ երկրիդ։

Դ.- Շրջանային պատերազմի վտանգի հաւանականութեան առկայութիւնը Լիբանանի ճակատագիրին վրայ ի’նչ օրհասական ազդեցութիւն կրնայ ունենալ։

Ե.- Պատերազմի դադրեցման համար միջազգային ընտանիքին կողմէ տարուող խաբուսիկ ճիգերը ցարդ ոչ մէկ յուսալից տեղաշարժի նշոյլ ցոյց տուած են։ Այս ծիրին մէջ ցարդ բացակայ են նաեւ պետութիւններու մեծամասնութեան դատապարտանքն ու նոյնիսկ մարդասիրական կեցուածքը։

Չ.- Ներքին հարթութեան վրայ լիբանանեան կողմերու հնչեցուցած կոչերը՝ ներկայ գերզգայուն փուլին միասնականութեան անհրաժեշտութեան մասին, որքանո’վ կրնան երաշխաւորել ներքին կայունութիւնը։

Է.- Պետութիւնը եւ պետական համակարգն ու ապահովական կառոյցները իրենց սահմանափակ կարելիութիւններով ինչպէ’ս պիտի կրնան ստեղծուած աղէտին հետեւանքները շրջանցել։

Այս եւ այլ հարցականներու շղթային տակ կքած է ամբողջ Լիբանանի ժողովուրդը, որուն դիմադրականութիւնը արդէն տկարացած է՝ երկիրը հարուածած իրերայաջորդ աղէտներուն պատճառով։

Տազնապալի այս կացութենէ անմասն չէ նաեւ լիբանանահայ համայնքը, որ դաժնալ պարտաւորութեան տակ է հաւաքական ճիգով եւ արթնամտութեամբ ստեղծուած նոր մարտահրաւերը դիմակալելու։

Յայաշխարհը ամբողջ կը տազնապի ու մտահոգ է սփիւռքի այս կարեւոր միջավայրի ապրած օրհասական կացութեամբ եւ վտահաբար պատրաստ է, խօսքը ու զգացմունքային արտայայտութիւններէ անդին, ինչպէս անցեալին, այսօր եւս իր գործնական զօրակցութիւնը դրսեւորելու։

Յ. Գ.- Այս զգայուն փուլին հայրենիքէն եւ սփիւռքէն, պարզապէս հետաքրքրական դառնալու շուտիկութեամբ, կարգ մը անհատներու լիբանանահայ համայնքի մասին կատարած մակերեսային վերլուծութիւնները եւ երեւակայական յորդորները օգտակար չեն, այլ ընդհակառակն, ստեղծուած կացութիւնը աւելի ծանրակշիռ կը դարձնեն։

Պէտք է մտածել միայն լիբանանահայ համայնքի ներդինելիք հաւաքական ճիգին օգտակար դառնալու մասին։ Այս է օրուան հրամայականը։

ՅԱԿՈԲ ՅԱՒԹԵԱՆ

ԱՆԴԵՂԵՐ
Մայրամուտ է իջնում վրաս, Եւ խաւարը շրջապատում է ինձ. Խեղդում է սիրտս ու հոգիս պարտութեան դիմաց, Որ յօշոտեց հայրենիքս...
Օձ դաւուն ու Էրադոն թոյնել էն հանրութեանը, Պիտոն օձ են կլանում...
Վարակել եմ համայնքներ, Հայրենիք են վաճառում Կոլպալականների կաշառքով...
Չոհում եմ հայ բանակը... Այնպէս անկեղծ է ու նուիրուած, Մտողաշ ու զօրաւոր... Չոհում եմ դաւադրութեամբ...
Պատմութեան դժխմւմ արհաւիրք, Որ խեղդում է սիրտ ու հոգի...
Չեմ ուզում նիւթականը գերազանցի Բարոյականին, Հասարակութեանը մխրճի կեղծիքի մէջ. Պարում եմ ճշմարտութիւնը Եւ կեղծիք եմ բացայայտում. Կանխահաս յուսալիքութեամբ Խառնակ խոհերիս ճախճախտը տնքում է, Չեմ զօրում իմաստաւորել մտածողութիւնս. Պատուհասող սիւսգանգ է ըզդանջում, Որպէս ճակատագրի տազնապ... Խաւարի մէջ եւ աղէտի...
Նօսրացած պատրանք եմ փնտռում Պարտութիւնը, հոգեկան տազնապը սանձելու, Հպատակեցնելու պարտեալիս, Որ յառնեմ...
Յառնում եմ ինքնատիրութեամբ, Միջավայրի գերին չեմ այլեւս. Ճակատում եմ տեղատարափի դէմ, ընդդէմ, Մոլորուած թշուառական չառաքեալի դէմ, ընդդէմ, Պաւորութեան ու չարիքի դէմ, ընդդէմ։
Ոչինչ չեմ մոռացել, պատրանքներից բացի, Ղրիգդումում դեռեւս փայլուն ու խոշոր աստղեր կան Ձեռքս մեկնում եմ ամենալուսաւորին, Անդդեմ որոշումով ու համոզումով.- Ազբանազեան ազգիս ու Հայաստանին, Իմննց։
ԳՐԻՇ ՂԱԹԵԱՆ

ԱՆՈՐԱՎԱՐՅ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄՈՌՅՈՒԱԾ ԹԵՄԵՐԸ ԵՒ ՅԻՇՈՂՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ. ԻՆՉՈ՞Ւ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԷՏՔ Է ՊԱՀՊԱՆԷ ԻՐ ՊԱՏՄԱԿԱՆ ԹԵՄԵՐՈՒՆ ՅԻՇԱՏԱԿԸ

«Պահը հզօր է, բայց աւելի հզօր է յիշողութիւնը»։
(ԵՐՂԱՆ ՖՐԻՏՐԻՆ ԾԻԼԼԵՐ)

2020 թուականի 27 սեպտեմբերէն մինչեւ 9 նոյեմբեր տեւող արցախեան 44-օրեայ պատերազմին, ապա 2023 թուականի սեպտեմբերին իր պապեանական հողերէն հայ բնակչութեան հայաթափումին պատճառով Արցախի կորուստը կը հանդիսանայ մեր Նորագոյն պատմութեան մեծագոյն աղէտը։ Ամենացաւալին մարդկային հազարաւոր կեանքներու դէմ իրագործուած ոճիրն է, իսկ անգնահատելին հայրենի հողատարածքներու կորուստն է, հետեւանք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան դէմ միջազգային դաւադրութեան, ազերի-թըքական կանխամտածուած եւ լայնածաւալ յարձակումի։

1815 թուականի ցարական կառավարութեան հրամանագրով կը վերանայ Գանձասարի դարաւոր կաթողիկոսութիւնը եւ փոխարենը կը ստեղծուի մետրոպոլիտութիւն մը՝ յանձին Մարգիս Բ. Հասան-Ջալալեան մետրոպոլիտի, որ Նախապէս՝ 1810-1815 թուականներուն, կը կրէր Գանձասարի կաթողիկոսի տիտղոսը, ապա մինչեւ իր վախճանը (1828)՝ վարչականօրէն Էջմիածնի կաթողիկոսութեան ենթակայ մետրոպոլիտի մը աստիճանը։ Այդ ժամանակաշրջանին Նորաստեղծ այս մետրոպոլիտութեան ենթակայ մարզերու եւ գաւառներու մէջ կը հաստատուին Էջմիածնի կաթողիկոսութեան ենթակայ երեք թեմեր՝ Արցախի, Գանձակի եւ Շամախիի անուններով։

Արցախի թեմին մէջ կը մտնէին՝ Վարանդա, Խաչէն, Դիգակ, Բերդաձոր, Ջրաբերդ, Գիւլիստան, Լանքարան, Շաքի, Կապադակ, Հաւի, Խենի, Կամբեճան եւ Արաշ գաւառները։

11 մարտ 1836 թուականին ցարական կառավարութիւնը վաւերացուց «Պոլսժմէնէ» անունով եկեղեցական կանոնադրութիւն մը, որուն 141 յօդաւանդներն համաձայն պիտի առաջնորդուէր Հայ եկեղեցին։ Ըստ այս կանոնադրութեան, ռուսական տիրապետութեան տակ գտնուող տարածաշրջաններուն մէջ գործող Հայ եկեղեցին կը բաժնուի վեց թեմական վիճակներու, որոնցմէ հինգերորդն էր Արցախի թեմը։

Մարգիս Բ. Հասան-Ջալալեան մետրոպոլիտէն եւ իր արժանաւոր յաջորդ Պաղտասար Հասան-Ջալալեանէն ետք, Արցախի թեմը իր հոգեւոր-մշակութային եւ ազգային առումներով արդիւնաշատ գործեց եւ յարատեւեց մինչեւ 1930 թուականը, երբ խորհրդային հակակրօնական վարչակարգը ի նպաստ ազրպէյճանական իշխանութիւններուն փակել գայւ։

1988 թուականին սկիզբ առած արցախեան ազատամարտի գրեթէ առաջին իսկ փուլին՝ 1989 թուականին, Վազգէն Ա. եղջակալի-շատակ հայրապետի սրբատառ լոկոսակով վերահռչակուեցաւ Հայ եկեղեցւոյ Արցախի թեմը՝ իր հոգեւոր խնամքին տակ վերցնելով 1836 թուականի թեմական տարածքները։

Այնպէս կը թուէր, որ Արցախի 2023 թուականի սեպտեմբերին իրագործուած չարաքաստիկ հայաթափումով ընդմիշտ վերջ կ’ունենար Արցախի թեմին գոյութիւնը։ Այս առումով, միանգամայն ողջունելի պէտք է նկատել Էջմիածնի Գերագոյն հոգեւոր խորհուրդի 3 նոյեմբեր 2023 թուականին կայացուցած որոշումը (հակառակ հայկական պաշտպանութեան բանակի եւ աշխարհագօրային ստորաբաժանուներու կրած ծանր պարտութեան, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ինքնալուծարումին, նաեւ Արցախի վերջնական հայաթափումին)՝ պահպանելու Արցախի թեմը եւ անոր հոգեւոր կարգավիճակը՝ յանձին իր թեմակալ առաջնորդ Կրթանէս եպս. Աբրահամեանի։

Հարկ է անկեղծ խոստովանիլ, որ տյւնը Էջմիածնի Գերագոյն հոգեւոր խորհուրդի կարեւոր որոշումներէ մէկն էր։ Ի’նչ նպատակ եւ ինչպիսի՞ք՝ դիտարկութիւն կը հետապնդէր անիկա։ Արդեօ՞ք Կրթանէս եպիսկոպոս կը շարունակէր ըլլալ Արցախէն Հայաստան բռնագաղթուած ժողովուրդին հոգեւոր առաջնորդը, թե՛ այս մէկն ալ հերթական ուրիշ ռազմավարական ձախորդ քայլ մըն էր Հայաստանի Հանրապետութեան ներկայ իշխանութիւններուն վարած քաղաքականութեան դէմ՝ դժուար է ըսել։ Սակայն մենք պիտի ուզենք այս որոշումին մէջ դրականը գնահատել՝ միաժամանակ անկաշկանդ հարց տալով, թէ այս պարագային ինչու՞ Հայ եկեղեցին մոռացութեան ենթարկած է իր պատմական միւս թեմերը։ Թեմեր, որոնք գոյութիւն ունեցած են իրենց վանքերով ու բազմաթիւ եկեղեցիներով, նաեւ՝ հայ ազգաբնակչութեան ստուար թիւներով, որոնք չար բախտին բերումով, արիւնալի կոտորածներով, բռնի տեղահանումներով, հայրենի հողային տարածքներու բռնազաւթումով ֆիզիքապէս անհետացած են, բայց յիշատակը անոնց եւ պահանջատիրութեան իրաւունքը կենդանի են՝ հայ ժողովուրդի հաւաքական գիտակցութեան մէջ։

Երբ չես յիշեր անձ մը, որեւէ երեւոյթ կամ առարկայ մը, ենթակալքաբար, այսինքն՝ **սուբյեկտիւ** իմաստով, կը դադրի գոյութիւն ունենալէ, հակառակ անոր որ ան կրնայ առարկայական՝ **օբյեկտիւ** տուեալներով միշտ ալ ըլլալ յօշմփելի իրականութիւն մը։ Արդեօ՞ք այս եւ նման անածումներու խորապատկերին վրայ չէր ըսեր Սկիւտարի հայ տիսակը՝ Պետրոս Դուրեան, իր «Իմ մահը» բանաստեղծութեան մէջ.

«Իսկ աննշան եթէ մայր երկրի մէկ խորշն հողակոյտն իմ, եւ յիշատակս ալ թառնիմ, Մ’ի, ա’յն ատեն եւ կը մեռնի»։

Անկայ յօդուածը ընդարձակելու նպատակով պիտի չուզէի երթալ հնագոյն ժամանակներ, այլ՝ պարզապէս նշել, որ Կիլիկեան թագաւորութեան փառահեղ օրերուն հայոց կաթողիկոսութեան թեմական վիճակագրութիւնը շատ աւելի ընդարձակ էր, քան՝ Կիլիկիոյ սահմանները։ Ըստ հայր Դեոնղ Ալիշանի «Սիսուան. համագրութիւն հայկական Կիլիկիոյ եւ Լեւոն Մեծագործ» ստուար աշխատասիրութեան, գոյութիւն ունեցած են 23 թեմական վիճակներ. այսպէս՝ Սիս, Տարսոն, Լամբրոն, Անաւարզա, Մամեստիա, Ատանա, Այաս, Բարձրբերդ, Կապան, Շամաճու, Կոպիտառ, Սեւելիս, Ընկուզուտ, Հարգան (Հաճըն), Մդլետն, Մաշկուտ, Բերդոս, Սամվէլաւ, Յոհնանց, Փիլիպպոսեան, Մեծար, Մաշարդ եւ Տիսանա [1]։ Այս շարքին պէտք է նկատել նաեւ Կիպրոսի վիճակը՝ աթոռանիստ ունենալով Նիկոսիա քաղաքը։

Այստեղ թուարկուած են անշուշտ այն թեմերը, որոնք մեծաւ մասամբ ներառուած են Կիլիկիոյ հայկական թագաւորութեան սահմաններուն մէջ։ Սակայն պէտք է նկատի ունենալ նաեւ եկեղեցական այս վիճակներն ու կեդրոնները, որոնք աշխարհագրականօրէն կը գտնուէին Եփրատի արեւելեան տարածաշրջաններուն մէջ՝ Արեւելեան վարչապատներու, Աղուանից եւ Գանձասարի կաթողիկոսութեան, Սիւնեաց մետրոպոլիտներու, Շիրակի, Էջմիածնի, Արարատեան դաշտավայրի եւ այլ վիճակաւոր եպիսկոպոսներու հոգեւոր վերահսկողութեան ներքոյ։

Համաձայն Մաղաքիա արք. Օրմանեանի հաղորդած հաւաստի տուեալներուն, Նախաեղեռնեան ժամանակաշրջանին [2] Հայ եկեղեցին իր թեմական վիճակներով կը ներկայացնէր հետեւեալ պատկերը.

1.- Թեմական վիճակագրութիւն Ամենայն Հայոց կաթողիկոսութեան՝ աթոռանիստ կեդրոն ունենալով Մայր Աթոռ Ս. Էջմիածինը. Երեւան, Նախիջեան, Աղեքսանդրապոլ, Կարս, Տաթև, Տփղիզ (Թիֆլիս), Գորի (Գրաստան), Ախալցխա, Գանձակ, Շուշի, Նուխի, Շամախի, Պաքու, Աստրախան, Ղզլար (Տարստան), Պեսարապիա, Նոր Նախիջեան, Ս. Փեթերսպուրկ, Մոսկուա, Սպահան, Թեհրան,

ԵՐԵՔԸԱԲԹԻ,1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2024

Մարտի 1-ին Երևանի քաղաքային շրջանի քաղաքապետարանի շենքի մոտ: Մարտի 1-ին Երևանի քաղաքապետարանի շենքի մոտ: Մարտի 1-ին Երևանի քաղաքապետարանի շենքի մոտ:

Մարտի 1-ին Երևանի քաղաքային շրջանի քաղաքապետարանի շենքի մոտ: Մարտի 1-ին Երևանի քաղաքապետարանի շենքի մոտ: Մարտի 1-ին Երևանի քաղաքապետարանի շենքի մոտ:

Մարտի 1-ին Երևանի քաղաքային շրջանի քաղաքապետարանի շենքի մոտ: Մարտի 1-ին Երևանի քաղաքապետարանի շենքի մոտ: Մարտի 1-ին Երևանի քաղաքապետարանի շենքի մոտ:

Մարտի 1-ին Երևանի քաղաքային շրջանի քաղաքապետարանի շենքի մոտ: Մարտի 1-ին Երևանի քաղաքապետարանի շենքի մոտ: Մարտի 1-ին Երևանի քաղաքապետարանի շենքի մոտ:

Ատրպատական, Համատան, Կալկաթա, Պաթաւիա (Ինտոնեգիա),

Սուլաւա, Երոպա եւ Հիւսիսային Ամերիկա [3]:

2.- Թեմական վիճակագրութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան՝ աթոռանիստ կեդրոն ունենալով Կիլիկիոյ Սիս մայրաքաղաքը. Սիս, Ատանա, Հաճըն, Փայաս, Բերիա, Գերմանիկա (Մառաշ), Ուլկիա (Չէթուն), Ֆըռնուզ, Անթապ, Անտիոք, Մելիտնէ (Մալաթիա), Եոզղաթ, Կիրին, Տեփրիկէ (Տեւրիկ) եւ Տարանտիա (Տաբենտ՝ Սեբաստիոյ գաւառ) [4]:

3.- Երուսաղէմի հայոց պատրիարքութիւն, աթոռանիստ՝ Երուսաղէմ. Յոպպէ, Դամասկոս եւ Վերիտոն (Պէրյուք) [5]:

4.- Թուրքիոյ հայոց պատրիարքութիւն՝ աթոռանիստ կեդրոն ունենալով Կ. Պոլիսը. Կ. Պոլիս, Նիկոմիդիա, Արմաշ, Ադրիանուպոլիս, Ռոտոսթօ, Թեսաղոնիկէ, Պրուսա, Պիլեճիկ, Փանորմոն, Գութինա, Չմիւռնիս, Պափղազոնիա, Փաղատիա, Կեսարիա, Իքոնիոն (Եռնիս), Սքաստիա, Եւդոկիա, Ամասիա, Նիքոպոլիս, Ամպտեր, Սամսոն, Տրապիզոն, Կարին, Երզնկա, Բաբերդ, Բասէն, Դերջան, Կամախ, Խորձեան, Բագրեանդ, Վան, Լիմ-Կոտուց, Աղբակ, Բաղէշ, Տաբօն, Սդերդ, Տիգրանակերտ, Բալահովտ, Ադրնի, Չըքուշ, Խաբերդ, Ակն, Արաբկիր, Չմշկածագ, Չարսանճաք, Եդեսիա, Բաբելոն, Կիպրոս, Եգիպտոս, Պուկարիա, Ռումանիա եւ Յունաստան [6]:

5.- Աղթամարի կաթողիկոսութիւն՝ աթոռանիստ կեդրոն ունենալով Աղթամար կղզին. Կաւաշ, Շատախ եւ Կարճկան քաղաքները (70.000 ազգաբնակչութիւն), Նաեւ Իիզան [7]:

Հայ եկեղեցւոյ վերոնշեալ նուիրապետական կեդրոններուն ենթակայ թեմական վիճակագրութենէ կը տեսնենք, որ պատմաքաղաքական հանգամանքներու բերումով, տարբեր պետութեանց սահմաններու ընդարձակումով կամ ոմանց սահմանափակումով պարտադիր փոփոխութիւններու ենթարկուած են նաեւ Հայ եկեղեցւոյ թեմական վիճակները՝ յաճախ հիմներու վերացումով եւ նորերու ստեղծումով։ Բաւական է համեմատել Թուրքիոյ հայոց պատրիարքութեան ենթակայ թեմերուն թուաքանակը՝ կարենալ եզրակացնելու համար, թէ որքա՞ն հեղինակաւոր դարձած էր անոր դիրքը յաշն Օսմանեան կայսրութեան ժԹ. դարուն եւ Ի. դարու սկիզբը՝ մինչեւ Ցեղասպանութեան սեւ տարեթիւը եւ հայ ազգաբնակչութեան բռնի տեղահանումը հայրենի իր դարաւոր հողերէն։

Կարենալ համեմատելու համար պատմականն ու արդիականը՝ աւելորդ պիտի չըլլայ այստեղ անդադրառնալ Հայ եկեղեցւոյ թեմալան ներկայ վիճակագրութենէ։ Հոս պիտի տեսնենք, որ Սալկապէս Ի. դարուն հայ սփիւռքի նոր գաղթօճախներու ստեղծումով հաստատուած են նոր թեմական վիճակներ, վերջուէ երբեմնի թեմեր հայութեան նօսրացումով ընդհանրապէս անհետացած են։

1.- Ամենայն Հայոց կաթողիկոսութիւն՝ իր Ս. Էջմիածին աթոռանիստ կեդրոնով. Արարատեան, Շիրակի, Գուգարաց, Արմաւիրի, Սիւնեաց, Արագածոտնի, Կոտայքի, Գեղարքունեաց, Կայոց Ձորի, Տաւուշի, Արթիկի, Մասեացոտնի, Արցախի, Կրասնաւայ, Ռուսիոյ եւ Նոր Նախիջեանի, Ջրասնտարի եւ Հիւսիսային Կովկասի, Ուքրաւնիոյ, Պալթեան երկիրներու, ԱՄՆ-ի (արեւելեան), ԱՄՆ-ի (արեւմտեան), Զանաւայի, Արժանիսի, Պրագիլի, Ուրուկուլի, Ֆրանսայի, Մեծն Բրիտանիոյ եւ Իրլանտայի, Ռումանիոյ, Պուկարիոյ, Յունաստանի, Գերմանիոյ, Չուիցերիոյ, Եգիպտոսի, Իրաքի, Դամասկոսի, Աստրալիոյ եւ Նոր Չեյանտիոյ, Ազրպէյճանի հայոց թեմեր։

2.- Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւն՝ իր Անթիլիաս աթոռանիստ կեդրոնով. Լիբանանի, Բերիոյ, Ճեզիրէի փոխանորդութիւն, Դամասկոսի, Կիպրոսի, ԱՄՆ-ի (արեւելեան), ԱՄՆ-ի (արեւմտեան), Զանաւայի, Յունաստանի, Սպահանի, Ատրպատականի, Զուէյթի եւ շրջակայքի, Վենեզուելայի հոգեւոր տեսչութեան, Արաբական Միացեալ Էմիրութեանց, Զաթարի եւ շրջակայից հայկական թեմեր։

3.- Երուսաղէմի հայոց պատրիարքութիւն - Այստեղ հարկ է նշել, որ 1929 թուականին Հայ եկեղեցւոյ նուիրապետական աթոռներու ներքին համաձայնութեամբ Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը Սիսի իր աթոռանիստ կեդրոնէն վարարանի դարձած Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կը գիջի Դամասկոսի եւ Լիբանանի թեմերը, որպէսզի ան կարենայ պահել իր հանգամանքն ու վերապրելու ի հնարաւորութիւնները։ Ներկայ վիճակով Երուսաղէմի հայոց պատրիարքութեան

ՎԱԶԳԷՆ ՏԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԳԱՄԲԱՆԱԿԱՆ



Ստորև կը հրապարակենք Համազգայինի Կեդրոնական վարչության խոսքը՝ կարդացուած Վրէժ-Արմէն Արթիւրեանի կողմէ՝ բժ. Վազգէն Տեր Գալուստեանի տան կարգին, Մոնրէալի Սուրբ Յակոբ առաջնորդական խորհուրդի կողմէ, 2024 տեղադրութեան 15-ին:

Նախ թոյլ տուեք, որ Համազգայինի հայ կրթական եւ մշակութային միութեան Կեդրոնական վարչութեան անունով՝ ատենապետ Չարար Զեյնեանի ու բոլոր վարչականներուն կողմէ Համազգայինի համայն ընտանիքի խորագրաւ ցաւակցութիւնները յայտնեմ Նոյն այդ Կեդրոնական վարչութեան բազմիցս անդամ ու ատենապետ եղած Վազգէն Տեր Գալուստեանի կնոջ՝ սիրելի Լենային, դուստրերուն՝ Սարիսին ու Տարիային եւ իրենց ամուսիններուն, գաւազներուն, ինչպէս նաեւ՝ մօտաւոր թէ հեռաւոր ազգականներուն, որոնց համար անկասկած կորուստը շատ է ծանր:

Բայց կորուստը ծանր է բոլորին համար, բոլորը՝ ընդգրկելով իր ընկերները, ծանօթները, գործակիցները, բուժառուները, Նոյնիսկ՝ բոլոր անոնք, որոնք այս կամ այն ձեւով վայելած են իր հասարակական գործունեութեան թէ մասնագիտական փորձառութեան բարիքները՝ առանց երբեք իրեն հանդիպած, ճանչցած կամ որեւէ պատճառով անունն անգամ լսած ըլլալու:

Իր կրօնական եւ համազգայնական ընկերներուն համար Վազգէն տիպար անձնաւորութիւն մըն էր ամենէն առաջ իր վարուելակերպով: Հակառակ իր բոլոր կարողութիւններուն եւ հմտութիւններուն, ան ոչ մէկ յաւակնութիւն կը ցուցաբերէր ուրիշներէ գերադաս ըլլալու կամ ամէն բան գիտնալու: Իրեն հետ ունէ մէկ կրնար խօսիլ հարազատի նման, հաւասարէ հաւասար, ամենէն առտուին հարցերուն մասին անգամ, ու միաժամանակ զգալ ջերմութիւն մը, առնչութիւն մը. ինք միշտ վայելուէ՝ արտաքինով թէ ներքինով:

Իր մտքերն ու համոզումները գիտէր ուժեղ կերպով արտայայտել՝ առանց երբեք վարկաբեկելու տարբեր մտածող դիմացինը, նսեմացնելու անոր կարծիքը, եւ եթէ որեւէ պատճառով ձայնը բարձրացուցած ու զայն անհանգստացուցած ըլլար, գիտէր անյապաղ ներողութիւն խնդրել ու «հաշտուիլ»: Եւ եթէ տակաւին յամառելի ներուած զգալ, իր վարակիչ ժպիտը կ'անհետացնէր ամէն բացասական զգացում:

Աւելին. Վազգէն գիտէր հետեւողականօրէն հետապնդել իր առաջադրանքները եւ հակառակ իր բազմազբաղ վիճակին (իր օրատեսչ-յուշատեսչը միշտ ձեռքը)՝ պատրաստ էր անձնապէս մասնակցելու անոնց իրագործման աշխատանքներուն. հակառակ պարագային՝ պիտի չսրտնեղէր երբեք, եթէ անոնք մերժուէին ընդհանուրին կողմէ: Ունէր համբերութիւնը յաջորդ առիթին, յաջորդ բոլոր հնարաւոր առիթներուն վերստին առաջարկելու՝ աւելի համոզիչ շեշտով: Իր առաջարկները պիտի ունենային հեռահար ազդեցութիւն: Եւ այդ, ինք հաւատացողն էր նաեւ հաւաքական աշխատանքին, հաւաքական ուժին:

Իրաւամբ ան արժանացած էր Համազգայինի շքանշանին, ինչպէս նաեւ՝ Մեծի Տանի Կրիկիոյ կաթողիկոսութեան «Կրիկիոյ իշխան» շքանշանին:

Վազգէն Տեր Գալուստեան մեծ հաւատք ուներ նաեւ մեր ներուժին վրայ, ուստի մենապէս կ'ընդհանար՝ ի տես Նոր հասնող մեր երիտասարդ ուժերուն, կը խրախուսէր ու կը ջանար ամէն կերպ նպաստել անոնց զարգացման ու յառաջացման: Կը զգայիր, որ հայրական զգացում մը կը տածէր անոնց հանդէպ: Մասնաւոր ան կը պահանջէր, որ հաւաքականութիւնն ալ զգնահատէր անոնց յաջողութիւնները: Իսկ մեր ներուժը ըսելով՝ ան կը հասկնար ամբողջ հայութեան կարողութիւնները, ոչ միայն մէկ կողմի կամ մէկ հատուածի:

Մեր մշակոյթն ու մեր լեզուն եւ մեր կրթարանները կիզակեան էին իր ուշադրութեան, եւ ատոր վկայութիւնը կը հանդիսանան Համազգայինի մէջ երկարամեայ իր յանձնառութիւնները թէ այդ յանձնառութիւններու աւարտին տեղ ալ տակաւին իր հետապնդած ծրագիրները:

Ան այդ, ան կը մնայ մեզի եւ մեր յաջորդներուն համար տիպար կերպարը համազգայնականի, դաշնակցականի ու մարդու, որուն օրինակով ապրիլն ու գործելը մեր ձգտումը պէտք է հանդիսանայ:

Վարձքը կատար մեր վաստակաւոր ընկերոջ:

ԱՄՓՈՓ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Բժիշկ Վազգէն Տեր Գալուստեան ծնած է 27 հոկտեմբեր 1937-ին, Անտիոք: Ան գաւազն է տեր եւ տիկին Մովսէս եւ Անահիտ Տեր Գալուստեաններուն: Ծանօթ իրադարձութիւններու ի հետեանք՝ ընտանիքը 1939-ին հարկադրաբար կը հեռանայ Մուսա Լեռնէ ու կը հաստատուի Լիբանան: Ազգային ուսումը ստացած է Պէյրութի Նշան Փալանճեան ճեմարանէն:

Բժշկական հիմնական ու մասնագիտական

Շար.ը՝ էջ 6

ՄԵԾ ԲԺՇԿԱՊԵՏ, ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՀԱՒԱՏԱԽՈՐ ԾԱՌԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԻՉ ՎԱԶԳԷՆ ՏԵՐ ԳԱԼՈՒՍՏԵԱՆԻ ՅՈՒՇԵՐՈՎ

2024-ի օգոստոսին հրատարակուեցաւ «Բժիշկին Ե. խօսքը» գիրքս եւ անոր լոյս աշխարհ գալը հայ մամուլին մէջ յիշատակուեցաւ Նոյն ամսուն մէջ:

«Բժիշկին Ե. խօսքը» հատորը կազմուած է եօթը գլուխներէ: Կեցեցեցեց գլուխին մէջ գրուած է հին դարերէն մինչեւ մեր օրերը 43 երախտաւոր հայ բժիշկներու, ատամնաբուժներու, դեղագործներու եւ գիտնականներու հետաքրքրական կենսագրութիւնները: Այս երախտաւորներու հետաքրքրական կենսագրութիւններուն մէջ տեղ գտած էր նաեւ բժիշկ Վազգէն Տեր Գալուստեանի մասին գրութիւնը: Գրած էր իր մասին 10 նոյեմբեր 2023-ին, երբ արդէն ան կը ծառայէր անկողնի եւ կը տառապէր տարեցութեան ախտանշաններէ ու վատթարացած առողջութենէ:

Դժբախտաբար բժիշկ Վազգէն Տեր Գալուստեան բախտը չունեցաւ տեսնելու «Բժիշկին Ե. խօսքը» գիրքը եւ կարդալու վկայութիւններս իր մասին, որ տեղադրուած էր այս հատորին մէջ:

Յետմահու «Բժիշկին Ե. խօսքը» համեստ աշխատանքները օրինակ մը մակագրուած կը նուիրեմ բժիշկ Վազգէն Տեր Գալուստեանի կողակցին՝ ազնուփայլ տիկին Լենա Մեթեան-Տեր Գալուստեանին:

Վազգէն Տեր Գալուստեանը եղաւ իմ կենսիցի երկարամեայ գործակիցը, անկեղծ բարեկամը եւ սիրելի ընկերը ու մանաւանդ՝ խորհրդատու հայ ՄԵԾ ՄԱՐԴԸ: Ան եղաւ հայ ժողովուրդի արդար իրաւունքներուն պաշտպանը եւ Հայ դատի գաղափարախօսութեան զինուորագրեալ մէկ համեստ անհատը:

Սիրելի բժիշկ Վազգէն Տեր Գալուստեան, կենացիս մնացեալ տարիները պիտի ապրիմ քու յիշատակներով, շարունակ պիտի յիշեմ՝ քու օրինակելի ազնուութիւնը, հայ ազգի եւ Հայ դատի անխնոջ ծառայութիւնները, կազմակերպուած աշխատելածեղը, աշխատանքի կարգապահութիւնը, ՄՏԿ կաողիկոսութեան անսասանութեան պահպանը:

Սիրելի՛ Վազգէն, երէկ Դիմատետրի էջիս մէջ քեզի նուիրեցի Յասմիկ Պաղտասարեան-Տուրուխանեանի «Տարօնի օրօրը» եւ իր շատ սիրելի մեծ երաժիշտին՝ Բարսեղ Կանաչեանի «Օրօրը», որպէսզի այս հայաշունչ օրօրներ



Բժիշկներ Վազգէն Տեր Գալուստեան եւ Կարպիս Հարպոյեան իրենց մտերմիկ առանձնութեան մէջ, 2011



Բժիշկներ Վազգէն Տեր Գալուստեան եւ Կարպիս Հարպոյեան հերթաբար կը վարեն Ազգային Ընդհանուր ժողովը, 2016



Բժիշկներ Վազգէն Տեր Գալուստեան եւ Կարպիս Հարպոյեան 2008-ին միասնաբար կ'արժանանան Համազգայինի Կեդրոնական վարչութեան շքանշանին՝ ձեռամբ Կեդրոնական վարչութեան ատենապետ Սկրտիչ Սկրտիչեանի:

րով հանգչէի խաղաղութեան մէջ: Նուիրեցի նաեւ Արամ Խաչատուրեանի «Գայեանէ» պալէէն «Ուզունտարա» պարային երաժշտութիւնը, որպէսզի քու յաւիտեական հանգստավայրիդ մէջ հոգիդ հրճուէր առաւել տալով մեզ այնպէս, ինչպէս կ'ուզէիր քու կենդանութեանը:

Սիրելի՛ Վազգէն, վստահ եմ, որ դուն ալ այսուհետեւ քու յաւիտեական հանգստավայրէդ պիտի դիտես մեզ եւ հետեւիս մեր քայլերուն, մատնանշես մեր սխալները եւ ուղղես մեզ այնպէս, ինչպէս կ'ուզէիր քու կենդանութեանը:

Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի:

ԲԺՇԿ ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ

Մոնրէալ, 11 սեպտեմբեր 2024

Ի ՅՈՒՇ ՎԱԶԳԷՆԸ՝ ՄԵԾ ԵՂԲԱՅՐԱՍ

Խօսիլ Վազգէն Տեր Գալուստեանի մասին՝ կը նշանակէ խօսիլ հարազատ եղբոր մը մասին, եղբոր մը, որուն հետ փոխադարձ ծանօթութիւնը կ'երթայ մեր երկուքին ալ ծնելէն առաջ, քանի որ մեր մայրերը՝ երկու Անահիտները, մտերիմ դասընկերուհիներ էին եղած՝ Աղեքսանդրիա, Պողոսեան ազգային վարժարանին մէջ:

Կայ նաեւ ուրիշ առնչութիւն մը, այս անգամ՝ Համազգայինի ճամբով, առնչութիւն մը, որ Նոյնպէս գոյութիւն ունեցած է նախքան մեր աշխարհ գալը: Վազգէնին մայրը դուստրն էր մեր միութեան հիմնադիրներէն համարուած Մինաս Խաչատուրեանի, իսկ իմս՝ դուստրը Նոյն այդ միութեան գաղափարի գոյաման իր անմիջական մասնակցութիւնը բերած, բայց պարագաներու բերմամբ այդ հիմնադիրներէն մէկը չհանդիսացած Մերոյ Արատունեանին:

Դեպքերը այնպէս բերած էին, որ մօրս ընկերուհին իրմէ քանի մը տարի առաջ արդէն ամուսնացած էր Մուսա Լեռան հերոսամարտի ղեկավար-հերոս Մովսէս Տեր Գալուստեանին հետ ու փոխադրուած՝ Անտիոքի շրջանը, այն ատեն՝ ֆրանսական հոգատարութեան տակ:

Ուրեմն մեր մայրերուն միջեւ առկայ եւ հեռուէ հեռու ալ շարունակուած մտերմութիւնը ժառանգաբար անցած էր մեզի ալ...

Այդ մտերմութեան շնորհիւ է, որ առաջին լուսանկարը, որ կրցայ գտնել մօրս ալպոմներուն մէջ, շատ երիտասարդ ու գեղադեմ Անահիտ Տեր Գալուստեանին մէկ նկարն է, երբ հաւանաբար հազիւ 21 տարեկան էր ան, եւ ուղիք՝ գրկած քանի մը ամսական երեխայ մը, որ գլուխը դարձուցած է եւ ուշադիր իր նախածքը յարած է լուսանկարիչին: Այդ երեխան Վազգէնն է:

Երկրորդ լուսանկարը, որ կը կարծէի գտնել, բայց գուցէ միայն մտքիս մէջ դրոշմուած պատկեր մըն է, Խաչատուրեաններու պատշգամն է, ուր նստած՝ կը զրուցէինք մեծերն ու փոքրիկներս՝ դիտելով ծովը եւ ներշնչելով անկէ մեզի հասնող հարթեցնող զեփիւռը:

Աւա՛ղ, ոչ մէկ լուսանկար մնացէր է 1952-ին Այնճար մեր այցելութենէ՝ բացի պատմական նկարէ մը, ուր Կոստան Չարեան իր թելերուն մէջ առած է մայրս: Մեծ գորող այն ատեն Լիբանան էր, եւ անկասկած Տեր Գալուստեանները պատուի զգացած էին Մուսա Լեռան օրուան առթիւ զինք իրենց տան մէջ հիւրընկալելով: Եւ մենք ալ հոն էինք:

Երրորդ լուսանկարը Լիբանան է, շատ հաւանական է՝ Այն Նասա, ուր արձակուրդի էիք գացել Նոյն այդ տարին: Մենք երեքս ենք՝ ինձմէ երեք տարի մեծ Վազգէնը, ինձմէ երեք տարի փոքր եղբայրս Համոն ու եւ: Շատ յատկանշական նկար մըն է, ուր Վազգէն իրապէս աւագ եղբոր մը դիրքով կեցած է մեր ետեւ, եւ ուր անկասկած կը զգացուի մէկ ընտանիքի պատկանելիութիւնը:

Ահա այդ պատկանելիութեան զգացումն է, որ պիտի գոյատեւէր (հակառակ անոր որ երկար տարիներ իրարմէ այնքա՛ն հեռու պիտի ապրէինք), ապա պիտի ամրակայուէր մեր գաղափարական ու միութեանական պատկանելիութիւններով ու մնայուն գործակցութեամբ: Այդպէս, պիտի դառնայինք խոհակից ու սրտակից գործակիցներ՝ պաշտօններու վրայ գտնուելու ատեն թէ անկէ ալ անդին, մինչեւ՝ անողջ հիւանդութեան կողմէ Վազգէնի ուժերուն հետզհետէ ջլատումը:

Դեռ ուրիշ բազմաթիւ հետաքրքրական լուսանկարներ ալ կան պատկերաստեղներու մէջ: Կ'արժէ անդրադառնալ անոնցմէ ոմանց եւ:

Անոնցմէ ամենէն հիշը 1973 թուականէն է, Պէյրութ, Տեր Գալուստեաններու յարկաբաժինը, Վազգէնն ու ես՝ պէն-մօրուքով, իրարու շատ նման՝ «քաղաքակիրթ» չափերով (արդե՞ք Նորոյթն էր այն ատեն...), Վազգէնի կողակցիցը՝ Լենան (Մեթեան) եւ

ՎՐԵԺ-ԱՐՄԵՆ

Շար.ը՝ էջ 6

ՍՏԱՅՈՒԾ ԳԻՐԵՐ

«ՍԻՐԱՆ ՍԵԶԱ. ՆԱՄԱԿԱՆԻ» (Ա. ՀԱՏՈՐ)

Երեւանի մէջ 2023-ին լոյս տեսաւ «Սիրան Սեզա. Նամականի» (Ա. հատոր) գիրքը: Հատորը կազմած, ծանօթագրած եւ հրատարակութեան պատրաստած է Գեորգ Եազգեան:

Հատորին մէջ տեղ գտած են Սիրան Սեզայի (Չարիֆեան) փոխանակած Նամականիները Վահէ Վահեանի եւ Անդրանիկ Ծառուկեանի հետ:

Նամականիին հատորները լոյս կը տեսնեն Սիրան Սեզայի որդիին եւ հարսին՝ Վահագն եւ Անահիտ Զիւփէլեաններու մեկենսութեամբ:

Վահագն եւ Անի Զիւփէլեաններ յոյս կը յայտնեն, որ սերունդները ուսանելի եւ ուսումնասիրելի շատ բան պիտի գտնեն Նամականիի յաջորդաբար հրատարակուելից հատորներուն մէջ:

Եազգեան կ'ընէ, որ Սիրան Սեզա 20-րդ դարու հայ կենսի մէջ պատմական դեր խաղացած շատ քիչ հայուհիներէն է: Ան իր յայտնու բնատրուութեամբ գտնուած է շատ եւ շատ իրադարձութեանց կիզակետին մէջ՝ միշտ ունենալով իր ուրոյն տեսակետը, զոր պաշտպանած է ծայրայեղ կրօնութեամբ:

Սիրան Չարիֆեան ծնած է 1903-ին, Սկիւտարի մէջ եւ քոյրն է բանաստեղծ Մատթէոս Չարիֆեանի: Յաճախ է հայկական եւ ֆրանսական վարժարաններ եւ ամերիկեան Ռոպերթ քոլէճ: Բարձրագոյն կրթութիւնը ստացած է Նիւ Եորքի Զոյումպիա համալսարանէն ներս՝ հետեւելով լրագրութեան եւ գրականութեան ճիւղին:

Լիբանանի մէջ ան դարձած է մտաւորական խափ կեդրոնական դեմքերէն մէկը՝ համալիբանանեան մակարդակով: Ամբողջութեամբ նուիրուած է իգական սեռի իրաւունքներու պաշտպանութեան, առողջապահութեան բարելաման, հասարակական դիրքի բարձրացման, ինչպէս նաեւ կրթական ու մտաւորական կենսի ներս կանանց գործն մասնակցութեան պայքարին:

Սկիւնքահայ իրականութեան մէջ Սեզա աչքառու ներդրում

կ'ունենայ «Երիտասարդ հայուհի» պարբերաթերթի հրատարակութեամբ նախ 1932-1934-ին, ապա 1947-1968-ին՝ ընդհատումներով:

«Երիտասարդ հայուհի»-ն նկատուած է կանանց ուղղւած եւ կանանց հարցերուն նուիրուած իրաւունքներու եւ լիբանանահայ առաջին պարբերաթերթը եւ առաջիններէն մէկը ամբողջ արաբական աշխարհին մէջ:

Սեզա ամուսնացած է երկու անգամ. առաջինը՝ Եգիպտոսի մէջ, 1920-ականներու վերջը, Ալեքսանդր Մարգարեանի հետ, երկրորդը՝ 1930-ականներու կեսին՝ Ներսէս Զիւփէլեանի հետ, որմէ ունեցած է մէկ զաւակ՝ Վահագն:

Սիրան Սեզա մահացած է 8 սեպտեմբեր 1973-ին, Պէյրութի մէջ: Լիբանանահայ խմբագիր, գրող ու հասարակական գործիչներ Վահէ Վահեանի եւ Անդրանիկ Ծառուկեանի հետ Սեզայի փոխանակած Նամականիներուն մէջ կ'արտայայտուին անձնական ապրումներ, զգացումներ եւ յոյսեր:

Ինչպէս Վահագն եւ Անի Զիւփէլեաններ կը հաստատեն, Նամականիները կը ցոյցանեն ցեղասպանութենէ վերապրած մտաւորականներու տուայտանքները, ապրումները, հոգեկան բարդ աշխարհը, ծննդավայր եւ հարազատներ կորսնցուցածի տառապանքը եւ հուսկ ապա վերընձիւղուելու անիրաժէշտութիւնը: Փորձառութիւն մը, որ պէտք է ծանօթացուի գալիք սերունդներուն:

ԱՄՊԵՏ ՍԱՆԴԻԿԵԱՆ



ՎԱԶԳԵՆԸ...

Շարունակում 4-րդ էջէն

իրենց առաջին աղջիկը՝ Սարինը, մեծ հայրիկին՝ ընկ. Մովսէսին գիրկը: Տօնածառին առջեւ: Քանի մը մօտիկ, բայց հեռաբնակ ընկերներ ու ազգականներ տեսնելու համար էր, որ անցեր էի Լիբանանէն՝ Ռուսնտայէն վերադարձիս, ուր Քանաւտայէն գործով էի գացեր: Ի՛նչ հպարտութիւն էր ինծի համար լուսանկարուիլ այդ հերոսական դէմքին հետ:

Այդ նկարին մասին խօսելու ատեն չեմ կրնար անտեսել ուրիշ լուսանկար մը՝ նոյն օրերէն, ուր Վազգէնը կը բացաւայի, քանի որ ի՛նքն էր լուսանկարիչը այդ պահուն: Վաստակաւոր մտաւորական ընկ. Կարօ Գեորգեանի հետն եմ, իր տունը, ուր գիս տարաւ Վազգէն՝ մե՛ծ գոհունակութիւն զգալով, որ տարիքը առած, հիւանդ ու միևնաջ մնացած մեր այդ ընկերոջ այցելելու ցանկութիւն էի յայտնէր:

Միւս նկարներուն մէջ կան Զամազգայինի առաջին Պատգամաւորական ժողովի խմբանկարը, 1990-ին, Աթենքի մէկ արուարձանի պանդոկին առջեւ: Այս ալ պատմական լուսանկար մը պէտք է նկատենք: 1928-էն մինչեւ այդ թուականը այս միութիւնը նման ժողով չէր ունեցած ու չէր ընտրած իր Կեդրոնական վարչութիւնը: Այդ մէկը կը նշանակ-

ւեր ԶՅԴ Բիւրոյին կողմէ: Վազգէն հանդիսացաւ մէկ ձեւէն միւսին փոխանցման ալ կամուրջներէն մէկը: Ան մաս կազմած էր նշանակեալ վերջին վարչութեան եւ մաս կազմեց ընտրեալ առաջին վարչութեան:

Վերջապէս, յիշեմ նաեւ քանի մը նկար ալ 1994-էն՝ Զամազգայինի Բ. Պատգամաւորական ժողովին առթիւ առնըւած: Անոնցմէ մէկը «Յառաջ»-ի խմբագրատան մէջ է, Արփիկ Միսաքեանի ու Արփի Թոթոյեանի հետ: Երկուքս ալ մեր պարտաւորութիւնը կը նկատէինք անպայման անցնիլ այդ խմբագրատունէն ամէն անգամ, որ Փարիզ գտնուէինք:

Միւրը քաշուած է Ռոտենի թանգարանի պարտեզին մէջ, Վազգէնն ու ես՝ «Մտածողը» արձանին շուքին. խորհրդանշական նկար մը... Ամբողջ օր միասին պտտեր, թանգարաններէն անցեր, Լիւքսամպուրկի պարտեզն ալ վայելէր էինք:

Վերջապէս, լուսանկար մըն ալ՝ Զայաստան, ժողովի ատարտին. նախքան Ծաղկածորը ձգելը՝ մեզմէ մեծ խումբ մը որոշեց քայլելով իջնել դէպի Զրազդան, որուն ճամբուն վրայ պիտի տեսնէինք Մաքրավանքը, ուր ընկերներէն մէկը՝

Թորիկեան Չոհրապը, աւելի արագ հասեր էր ու ներսէն հոգեպարար շարականներ երգելով կը դիմաւորէր մեզ: Ամսոռանալի պահ մը, անմոռանալի վայրի մը մէջ:

Յիշատակներ...

Այս կցկտուր տողերը աւարտեմ՝ աւելցնելով, որ մեր գործակցութեան ընթացքին մենք հետապնդեցինք նաեւ երկու մեծ ծրագրեր՝ հայագիտական հիմնարկի մը հիմնադրութիւնը Քանաւտայի մէջ, ի Մոնրէալ, ու Զամազգայինի Կեդրոնական վարչութեան առաջադրանքն էր եւ հայերէնի ժամանակակից բացատրական առցանց բառարանի մը պատրաստութիւնը՝ գաղափար մը, որ յղացուեր էր «Գաւաթ մը բանի շուրջ» հաւաքուող մեր եռանդամ խմբակին կողմէ: Երրորդը՝ Մկրտիչեան Ժանը: Ամբողջ ողիսական մը կայ այս ծրագրին հետապնդման տարեգրութեան մէջ: Երկուքն ալ կը մասն ցարդ չիրագործուած: Անոնց իրականացման պարտաւորութիւնը թող Վազգէնին ու մեր աւանդը ըլլայ նորերուն:

ՎԱԶԳԷՆ ՏԷՐ ԳԱՆՈՒՍՏԵԱՆԻ...

Շարունակում 4-րդ էջէն

(մանկաբուժութեան եւ ծինաբանութեան) վկայականները ստացած է՝ Պէյրութի ամերիկեան համալսարանէն (AUB) (1963, 1966), ԱՄՆ-ի Պոսթըն քաղաքի Զարվըրտ համալսարանի (մանուկներու հիւանդանոցի) բժշկութեան բաժանմունքէն (1966), Պայթիմոր քաղաքի Ճոն Զոփքինգ համալսարանէն (1968), այլեւ օգտուած է այլ հաստատութիւններու ընծայած յայտագրերէն՝ զարգացնելու համար իր հմտութիւնները:

Բժիշկ Տէր Գալուստեան ամուսնացած է 21 յունիս 1970-ին, Լենա Սեթեանին հետ: Անոնք բախտաւորուած են երկու դուստրերով՝ Սարին-Վանիա եւ Տարիա:

1986-ին ընտանիքին հետ փոխադրուած է Մոնրէալ:

Իբրեւ մանկաբուժ եւ ծինաբան, ի շարս իր այլ յանձնառութիւններուն, Վազգէն Տէր Գալուստեան՝ մնայուն թէ այցելու փրոֆեսօր, դասաւանդած է Պէյրութի ամերիկեան համալսարանին (AUB) եւ Մոնրէալի ՄըԿիլ համալսարանին մէջ: Առաջինի պարագային նաեւ հիմնադիր տնօրէնն է եղած Մարդկային ծինաբանութեան ազգային միաւորին, իսկ երկրորդի պարագային վարիչ տնօրէնն է հանդիսացած անոր Մոնրէալի մանուկներու հիւանդանոցի ժառանգական հիւանդութիւններու բաժանմունքին, ինչպէս նաեւ՝ նոյն համալսարանի բժշկական ծինաբանութեան վարժողական յայտագրին:

Զամահեղինակն է երեք մասնագիտական հատորներու՝ Genetic diseases of the skin (1979), The

kidney in genetic disease (1986) եւ Congenital Anomalies of the Ear, Nose and Throat, (1997):

Ան առանձնաբար կամ համահեղինակութեամբ հրատարակած է նաեւ շատ մեծ թիւով գիտական յօդուածներ եւ ուսումնասիրութիւններ՝ զանազան թերթերու, հատորներու կամ տեղեկագրերու մէջ:

Զրաւիրուած է դասախօսելու միջազգային բժըշկական բազմաթիւ համագումարներու, մաս կազմած է մասնագիտական զանազան միջազգային մարմիններու, անոնց կարգին նաեւ՝ ԱՄԿ-ի բժըշկական կազմակերպութեան յանձնախումբերու:

Արժանացած է մեծ թիւով բժշկական շքանշաններու, մրցանակներու եւ մեծարումներու, այլեւ՝ ՄըԿիլ համալսարանի «Պատուոյ փրոֆեսօր» տիտղոսին:

Վազգէն Տէր Գալուստեան ԶՅԴ շարքերը մտած է 18 տարեկան հասակին ու ամբողջ կեանքը եղած է անոր նուիրեալ զինուորեալը: Եղած է բազմիցս անդամ, այլ նաեւ ատենապետ Զամազգայինի Կեդրոնական վարչութեան, ինչպէս նաեւ անդամ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Կեդրոնական վարչութեան:

Ազգային գետնի վրայ ալ արժանացած է Զամազգայինի շքանշանին՝ 2008-ին եւ կաթողիկոսութեան «Կիլիկիոյ իշխան» շքանշանին՝ 2010-ին: Ան մահացաւ Մոնրէալ, 2024 սեպտեմբեր 4-ին:

(Առաւելաբար քաղուած՝ բժիշկ Կարպիս Զարպոյեանի «Բժիշկին Է. խօսքը» հատորէն)

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ԳՈՐԻԶՈՆԱԿԱՆ

- Լայրիի Չարեանի երկերէն - Տաօի մը անունը:
- Կապոց - Մարտակերտի գիւղերէն:
- Էսկան բայ - Կտաւ - Գաղթող թոցուն:
- Աստուած - Լաիւնթաջ:
- Ուրիշին անկարօտ - Երկիւղ:
- Կարողի եփած քաղցու - Ձիւթ - Գեղեցիկ արքայ:
- Մրրկող - Վախճան:
- Ապարանը - Զեղ (իսկ.):
- Անձնական դերանուն - Շերամի թել:
- Պանդոյր:
- Յաճ, խոնարի - Ոչխար:

ՈՐԱԿԱՅԵՍԻՏ

- Սերտ - Մեղուսխումբ:
- 1885-ին հիմնուած հայկական կուսակցութիւն:
- Դրկից տառեր - Անթրոպոսէն ուժաթափիլ - Ռ'ուր:
- Յանձնել - Գարշելի:
- Ձիւնը, վճիտ - Ձայնակիշ:
- Կտաւ ճերմկնող - Օձի գալար:
- Ժխտական պատասխան - Դասակարգ - Մտացական ամական:
- Ռափայէլ Պատկանեանի երկերէն - Զուկ:
- Որովայն - Սաղմուտուն:
- Պաճուճան:
- Ուստի - Աշուղ Արմենակ Մարկոսեան:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

1		9		4		7
			2		8	
6	4			9		5
	3	6		5		
			3			
			6		5	7
4		7			2	6
		1		2		
9		8		4		1

Հորիզոնական եւ ուղղահայեաց 9 շարքերով եւ սիւմակներով (9x9) կազմուած գնացանցը բաղկացած է իւրաքանչիւրը 9 քառակուսի հաշտող 9 բաժինների (3x3): Բացառումի սկզբունքին իրաւունքով իւրաքանչիւր քառակուսիի մէջ թուանշան մը գետեղել՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրաքանչիւր շարք, ուղղահայեաց իւրաքանչիւր սիւմակ եւ 9 քառակուսիից իւրաքանչիւր բաժին ունենայ 3էն 9 թուանշանները՝ իւրաքանչիւր թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խօսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտօնուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւմակին եւ բաժինին մէջ: Սկսելու համար՝ կարող մը թուանշաններ իրենց ճշգրիտ քառակուսիներուն մէջ գետեղուած են:

ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆԻ ԽԱՂԵՐՈՒՆ ԼՈՒԵՆՈՒՄԵՐԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Գ	Ա	Ս	Ա	Դ	Ա	Ե	Ա	Ե	Դ	
2	Դ	Դ	Դ	Ե	Դ	Ե	Դ	Ե	Դ	Ե	
3	Ա	Դ	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	
4	Ա	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	Գ	
5	Ե	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	
6	Ե	Դ	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	
7	Ե	Դ	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	Ե	
8	Գ	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	
9	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	
10	Ա	Դ	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	
11	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	Ա	

ՇԷՅԽ ՔԱՍԵՄ. «ՊԱՏՐԱՍ ԵՆՔ ՈՐԵՒԷ...»

Շարունակում Ա. էջէն

«Այս մեծ ժողովուրդը, որ դժուար առաքելութիւններու ընթացքին ոտքի կանգնեցաւ, այժմ ոտքի կանգնեցաւ, եւ պիտի յաղթենք, ինչպէս 2006 թուականին խորայլեան թշնամին յաղթեցինք: Զակառակ քատրերու սահաբեկման, Իսրայէլ չկրցաւ վնասել մեր կարողութեան, եւ թշնամին կը խենթանայ մեզ զպէլ չկարողալուն համար», աւելցուց Զըգպալայի ընդհանուր քարտուղարի տեղակալը:

«Կը գործադրենք փոխարինող անհատներու եւ ղեկավարներուն համար Նասրալայի ճշրած այլընտրանքային ծրագիրները, եւ բոլորը պատերազմի դաշտին մէջ պատրաստ են: Այն, ինչ որ կ'ընենք, ճակատամարտը շարունակելու ծրագիրն մէկ փոքր բաժինն է՝ մեր գնահա-

տականի, ճշդուած ծրագիրներուն եւ պատերազմի ճշշտին կարիքներուն համաձայն», ըսաւ ան:

«Որեւէ կարելիութիւն պիտի դիմակայենք, եւ պատրաստ ենք, եթէ խորայլեացիները որոշեն ցամաքէն մուտք գործել: Դիմադրութեան ուժերը պատրաստ են ցամաքային ճակատումին, պատրաստուեցան եւ Աստուծոյ վստահելով վստահ ենք, որ խորայլեան թշնամին պիտի չիրագործէ իր նպատակները, եւ յաղթական դուրս պիտի գանք», աւելցուց Շէյխ Նայիմ Զասեմ:

Զըգպալայի ընդհանուր քարտուղարի տեղակալը շեշտեց. «Ճակատամարտը երկար է եւ ընտրանքները բաց: Եթէ խորայլեացին ցամաքէն մուտք գործէ, որեւէ կարելիութիւն պիտի դիմակայենք»:

ՄԱԿ-Ի ՅԱՏՈՒԿ ՉԵԿՈՒՅՈՂԸ...

Շարունակում Ա. էջէն

գործուած ցեղային գտումներուն, նշած է, որ իր այցելութիւնը համընկած է Արցախէն հազարաւոր հայերու բռնի տեղահանման: Ան աւելցուցած է, որ ականատես եղած է բռնի տեղահանուած բնակչութեան ցաւին եւ հրատապ կարիքներուն:

Սալվիոլի շեշտած է, որ արցախահայերու համար հրատապ խնդիր է Արցախի մէջ մնացած փաստաթուղթերու հասանելիութիւնը, իրենց հարազատներու գերեզմանոցներուն եւ մշակութային ժառանգութեան պահպանութիւնը:

Ճշմարտութեան, արդարութեան, հատուցման եւ չկրկնուելու երաշխիքներու խթանման հարցերով ՄԱԿ-ի յատուկ զեկուցողը միջազգային ընտանիքի համապատասխան անդամներուն եւ խնդիրին հետ կապ ունեցող միւս կողմերը յորդորած է Արցախի բնակչութեան ձայնը լսելի դարձնել:

Ան այս իռլովոյթին առնչակից միջազգային ընտանիքի անդամներուն եւ բնակցութեան կողմերուն կոչ

ուղղած է ապահովելու, որ Արցախին վերաբերող որեւէ բնարկում կամ համաձայնագիր ներառէ ճշմարտութեան **մեքանիզմ**ներու որդեգրում, մեղաւորներու հանդէպ քրեական պատասխանատուութեան կիրարկում, վնասի փոխհատուցում, տեղահանուած բնակչութեան արխիւներու եւ մշակութային ժառանգութեան պահպանում, ինչպէս նաեւ այդ ամէնը չկրկնուելու երաշխիքներ:

Սալվիոլի շեշտած է, որ նման **մեքանիզմ**ները պէտք է ստեղծուին միջազգային երաշխիքներու ներքոյ՝ բոլոր կողմերու անաչառութիւնն ու վստահութիւնը ապահովելու եւ բռնութեան կրկնութիւնը կանխարգիլելու նպատակով: Ան միջազգային ընտանիքին ուշադրութեան հրաւիրած է եւ յիշեցուցած, որ բոլոր բնարկումներուն եւ ապագայ համաձայնագիրներուն մէջ պէտք է արտացոլան ու ատոնց համար հիմք հանդիսանան անցումային արդարադատութեան միջազգային չափանիշերը:

ՕՐԱՏԵՏՐ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 1

- 1827 - Ռուսական բանակը Իվան Պասկեւիչի գլխավորութեամբ եւ Ներսէս Աշտարակեցիի կազմակերպած հայ կամաւորներու աշակցութեամբ պարսիկներէն կը գրաւէ Երեւանը:
- 1846 - Վերաբացում Սկիւտարի Ճեմարանին, որ փակուած էր 1841-ին:
- 1848 - Մատթէոս Բ. Չոխաճեան կը հրաժարի Պոլսոյ պատրիարքական աթոռէն:
- 1866 - Տնունդ նկարիչ Արշակ Ֆեթվաճեանի, Տրապիզոնի մէջ: Մահացած է 1947-ին, Մետֆորտ, Ամերիկա:
- 1881 - Բացում Կարնոյ Սանասարեան վարժարանին, Մկրտիչ Սանասարեանի միջոցներով եւ Կարապետ Եզեանի ջանքերով:
- 1883 - Տնունդ երգահան, երաժշտագետ, խմբավար եւ մանկավարժ Ռոմանո Մելիքեանի, Ղլարի մէջ: Մահացած է 1935-ին, Թիֆլիս:
- 1924 - Տնունդ արծակագիր Շահէն Թաթիկեանի, Թիֆլիսի մէջ: Մահացած է 1992-ին, Երեւան:
- 1926 - Մահ բանահաւաք եւ կրթական մշակ Սմբատ Դալբեանի, Երեւանի մէջ: Մահ էր 1858-ին, Ակն:
- 1973 - Փախ յեղափոխական եւ քաղաքական վաստակաւոր գործիչ Վահան Մափազեանի (Կոմս), Պէյրութի մէջ: Մահ էր 1876-ին, Թաւրիզ:
- 1992 - Զայկական ուժերը կ'ազատագրեն Արփազեաղուկ, Սպիտակաշէն, Պետրոսաշէն եւ Խճաբերդ գիւղերը, երկրորդ ճամբան բանալով Զայաստանի եւ Արցախի միջեւ:
- 2018 - Մահ նշանաւոր երգիչ, երգահան եւ դերասան Շարլ Ագնաւորի, Մուրիէի մէջ (Պուշ-տիւ-Ռոն): Մահ էր 1924-ին, Փարիզ:

ԹՈՒՐԲ ՀԱՄԱԿԻՐՆԵՐ ԶԱՐԶԱԿԵՑԱՆ ՀՄԸՄ-ՎԱՆԱՆՍԻ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Ֆրանսայի հինգերորդ դասակարգի Նահանգային ախոյեանության գծով, Վալանս քաղաքի դաշտին վրայ ՀՄԸՄ-Վալանս կը մրցեր ԷՖ. ՍԷ. Թիրքուազ խումբին դեմ, որ թրքական համայնքի խումբն է:

ՀՄԸՄ կը յաղթեր 2-0 արդիւնքով կիսախաղին: 80-րդ վայրկեանին համա-կիրները՝ դժգոհ արդիւնքէն, դաշտ խուժած են եւ դաշտիներով յարձակած ՀՄԸՄ-ի մարզիկներուն վրայ: 2 մարզիկներ լրջօրէն վիրաւորուած են եւ փոխադրուած հիւանդա-նոց, մինչ ռստիկանութիւնը հասած է դաշտը պար-պուելէ ետք:

Ֆրանսական «Լը Ֆի-կարօ» ամսաթերթի փոխտնօրէն Ժան Բրիսթօ-ֆըր Փոլիսիոն գրած է. «Շրջանային ֆուլպոլի հանդիպումի պահուն թուրք համակիրներ՝ դժգոհ ըլլալով իրենց «Թիրքուազ» խումբին պարտու-թենէն (2-0), դանակներով յարձակած են հայկական ծագում ունեցող ֆուլպոլիստներու վրայ: Ասիկա կը կոչուի ցե-ղապաշտութիւն եւնեւոքի վրայ»: Թուրք համակիրներ եւ մարզիկներ



արդէն իսկ իրենց ձեռքով կ'ընէին Գորշ քայլերու նշանները մրցումի սկիզբէն՝ վատ մթնոլորտ ստեղծելու նպատա-կով:

ԹԵՆԻՍ

ԱԼԲԱՐԱՍ ՅԱՂԹԵՑ ԽԱՉԱՆՈՎԻՆ

Երեկ տեղի ունեցան Փեքինի (Չինաստան) թե-նիսի բաց մրցաշարքի քա-ռորդ աւարտականի մըր-ցումները, որոնցմէ մէկուն ընթացքին հայազգի Կա-րէն Խաչանով բաւական պայքարելէ ետք առաջին սեթին, երկրորդ սեթին գրեթէ «յանձնուեցաւ» աշ-խարհի թիւ 2 թենիսիստ Զարուս Ալքարասին դի-մաց՝ 7-5 եւ 6-2 արդիւն-քով:

Կիսաւարտականին Ալքարաս պի-տի մրցի ռուս Տանիլ Մետովետիի դեմ, որ դուրս ձգեց թիւ 32 դասուած իտա-լացի Ֆլաւիօ Զոպոլլին՝ 6-2 եւ 6-4 ար-դիւնքով: Թիւ 1 թենիսիստ Եաննիք Սինըր (Իտալիա) 1 ժամ 46 վայրկեան մրցումէ մը ետք կրցաւ պարտութեան մատնել չէխ Խիրի Լեիեքան (թիւ 37)՝ 6-2 եւ 7-6 արդիւնքով: Կիսաւարտականին Սինըր պիտի մրցի չինացի Եունչաուքեթ Դուի (թիւ 96) դեմ, որ պարտութեան մատնեց Անտոն Բուպիլը (թիւ 6)՝ 7-5 եւ 6-4 ար-դիւնքով:



Աղջկանց Գ. հանգրուանի մրցում-ներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները. Արինա Սապալնեցա (Պիւլոռուսիա) - Ալլին Բրուկըր (Միացեալ Նահանգ-ներ) 6-2, 6-2 Մետիսըն Զիգ (Միացեալ Նահանգ-ներ) - Պեթթիա Զատտատ Մայա (Պրագի) 6-3, 6-3 Զարուիկա Մուչովա (Չէխիա) - Ժաքլին Բրիսթիան (Ռումանիա) 6-1, 6-3 Միրա Անտրեւա (Ռուսիա) - Տոնա Վեքիչ (Խորուաթիա) 3-6, 6-4, 6-4 Զինուեն Ժենկ (Չինաստան) - Նա-տիա Փոտորոնցա (Արժանթին)՝ 6-3, 6-2

«ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.» «ՉԵՄՓԻԸՆՆԶ ԼԻԿ»

ԱՅՍՕՐ՝ ԱՐՍԵՆԱԼ - ՓԱՐԻՉ ՍԵՆ ԺԵՐՄԵՆ

Այսօր կը սկսին «ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.» «ՉԵՄՓԻԸՆԶ ԼԻԿ»-ի Բ. շաբթուան մըր-ցումները, ուր ամենէն աչքառու մրցու-մին, Լոնտոնի մէջ, Արսենալ պիտի հիւրընկալէ ֆրանսացի «հսկայ» Փա-րիզ Սեն Ժերմենը:

Արսենալ, որ իր դաշտին վրայ յուն-ւարէն ի վեր չ'է պարտուած, բաւական լաւ վիճակի մէջ է, սակայն «ՉԵՄ-փիլնզ ԼԻԿ»-ի իր առաջին մրցումին Իտալիայէն ճերմակ հաւասարութեամբ վերադարձաւ, անցեալ տարուան «ԵՈՒ-րոփա ԼԻԿ»-ի ախոյեան Աթալանթայի դեմ մրցումին:

Փարիզ Սեն Ժերմեն իր կարգին լաւ ընթացքի մէջ է «Լիկ 1»-ի մէջ ու կը գրաւէ ախոյեանութեան պարագլուխի դիրքը եւ «ՉԵՄփիլնզ ԼԻԿ»-ի իր առաջին մրցու-մին 1-0 արդիւնքով վերջին վայրկեանին կրցած էր յաղթել Սպանիոյ Ժերոնային: Տիգրան Բարսեղեանի ակումբը՝ Սլովան Պրաթիսլաւա, Սլովաքիոյ մէջ պիտի հիւրընկալէ Մանչեսթըր Սիթին:

Տիգրան, որ իր վերջին մրցումին 1 կոլ եւ 1 էսիսթ կատարած էր, պիտի փորձէ անակնկալի բերել Սիթին, որ իր կատարած 4 մրցումներուն միայն 1 յաղթանակ արձանագրած է եւ կը տառապի դաշտին կեդրոնի միջնապահ Ռոտրիի բացակա-յութենէն:

Ստորեւ՝ Բ. շաբթուան մրցումներուն յայտագիրը. Ռեալ Պուլ Չալցայուրկ (Աստրիա) - Պրետթ (Ֆրանսա) Շթուբլարթ (Պերմանիա) - Սփարթա Փրակ (Չէխիա) Արսենալ (Անգլիա) - Փարիզ Սեն Ժերմեն (Ֆրանսա) Պարսելոնա (Սպանիա) - Եանկ Պոյզ (Չուիցերիա) Պայեր Լեւերքուզըն (Գերմանիա) - Ա. ՍԷ. Միլան (Իտալիա) Տորթմունտ (Գերմանիա) - Սելթիք (Սկոտլանդ) Ինթեր Միլան (Իտալիա) - Կարմիր Աստղ Պեկրատ (Սերպիա) ՓՍՎ Այնտրախտ (Նետերլանտներ) - Սփորթինկ Լիզպոն (Փորթուգալ) Սլովան Պրաթիսլաւա (Սլովաքիա) - Մանչեսթըր Սիթի (Անգլիա)



ԵՐՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՈՒՂ

ԼԻՎԵՐՓՈՒԼ ԳՐԱԼԵՑ «ՓՐԵՄԻԵՐ ԼԻԿ»-Ի ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Անգլիոյ «Փրեմիեր Լիկ»-ի 6-րդ հանգրուանէն ետք, Լիվերփուլ առանձին գրաւեց դասաւորման պարա-գլուխի դիրքը: Ասթոն Վիլա կրնար գրաւել Բ. դիրքը Նոյնքան կետերով (15 կէտ), սակայն չկրցաւ յաղթել Իփսուիչի դեմ մրցումին:

Ախոյեան Մանչեսթըր Սիթի Նիւքասլի դաշտին վրայ նշանակեց առաջին կոլը, սակայն Նիւքասլը կրցաւ հաւասարիլ Բ. կիսախաղին: Պետք է ըսել, որ Սիթի դաշտին կեդրոնը բաւական դժուարութիւն կ'ունենայ Ռոտրիի բացակայութեան՝ անոր ձգած բացը գոցելու: Ռոտրի ոչ միայն պաշտպանողական ու տեղին կը յառաջանար եւ հեռուէն կոլեր ալ կը նշանակէր: Ալեյիւն, պելճիքացի Զեյն տը Պրոսիէ իր կարգին վիրաւոր է եւ արդէն իսկ հասած հա-գրուանի մը, ուր յաճախ կը վիրաւորուի:

Արսենալ շատ հանգիստ մրցում մը կ'ունենար Լեաթըր Սիթիի դեմ եւ կիսախաղին 2-0 արդիւնքով յառաջացած էր, սակայն աջ կողմի պաշտպան Ճեյմզ ճասթըն 2 կոլ նշանակեց, որոնցմէ ետք Արսենալ զարմանալիօրէն խուճապի մատնուեցաւ եւ բերդին դիմաց շատ աճապարեց՝ դիւրին առիթներ կորսնցը-նելով: Միայն 94-րդ եւ 99-րդ վայրկեաններուն է, որ Արսենալի մարզիկները կրցան 2 կոլ նշանակելով մօտ մնալ Լիվերփուլին:



Չելսի շնորհիւ Զոլ Փալմըրի 4 կոլերուն յաղթեց Պրայթընի, մինչ Մանչեսթըր Եունայթըտ կը շարու-նակէ իր ձախող ելոյթները իր «Օլտ Թրաֆորտ» դաշ-տին վրայ, ուր 3-0 արդիւնքով ծանր պարտութիւն կրեց Թոթենհամէն: Եունայթըտ միայն 2 անգամ կըր-ցաւ վրանգել Թոթենհամի բերդը՝ Չիրզբիի եւ Կառ-նաչոյի միջոցով, եւ ըստ երեւոյթի երիջ Թեն Զակի պաշտօնանկ ըլլալու օրերը կը մօտենան:

Ստորեւ՝ 6-րդ հանգրուանի արդիւնքները. Նիւքասլ - Մանչեսթըր Սիթի 1-1 Նորթիսկիաժ Ֆորթսթ - Ֆուլհամ 0-1 Էվըրթըն - Բրիսթըլ Փելլես 2-1 Չելսի - Պրայթըն 4-2 Պրետթֆորտ - Ուեսթ համ 1-1 Արսենալ - Լեաթըր Սիթի 4-2 Կուլվզ - Լիվերփուլ 1-2 Իփսուիչ - Ասթոն Վիլա 2-2 Մանչեսթըր Եունայթըտ - Թոթենհամ 0-3

ԴԱՍԱՌՈՐՈՄ	ԿԵՏ
1.- Լիվերփուլ	15 (12-2)
2.- Մանչեսթըր Սիթի	14 (14-6)
3.- Արսենալ	14 (12-5)
4.- Չելսի	13 (15-7)
5.- Ասթոն Վիլա	13 (12-9)
.....	
18.- Բրիսթըլ Փելլես	3 (5-9)
19.- Սաութհեմփթըրն	1 (2-9)
20.- Կուլվզ	1 (6-16)

Գերմանիոյ «Պոլստըլիկա»-ի 5-րդ հանգրուանի ծիրին մէջ, հետաքրքրական մրցումի մը ընթացքին, Պայերն Միւնիխ տիրապետեց ախոյեան Պայեր Լե-ւերքուզընի դեմ մրցումին, սակայն բաւական ան-բախտ էր եւ 1-1 արդիւնքով հաւասարութիւն արձա-նագրեց:

Ռապերթ Անտրիշ 31-րդ վայրկեանին նշանակեց Լեւերքուզընի եւ մրցումին առաջին կոլը՝ Լեւերքուզը-նի միակ առիթը օգտագործելով Ա. կիսախաղին: 8 վայրկեան ետք 20 տարեկան Ալեքսանտր Փալուվիչ մօտ 20 մետրէն ուժգին հարուածով մը նշանակեց գե-ղեցիկ կոլ մը՝ հաւասարեցնելով արդիւնքը:

Բ. կիսախաղը հազիւ սկսած, Սերժ Կնապրի պար-տութեան մատնեց Լեւերքուզընի ֆինլանտացի բեր-դապահ Լուքաս Զրատեքը, սակայն բերդին ձախ սիւ-նը զսպեց Կնապրիի հարուածը: Չուրպը վերադար-ծաւ Կնապրիի, որ այս անգամ օղէն փորձեց գրաւել Լեւերքուզընի բերդը սակայն այս անգամ գնդակը զսպուեցաւ բերդին ծոցին կողմէ:

Այնթալթա Ֆրանքֆորթ 4-2 արդիւնքով յաղթեց Զոլլէրն Զիլի դաշտին վրայ եւ գրաւեց Բ. դիրքը՝ օգ-տուելով Ֆրայպուրկի անակնկալ պարտութենէն 2անք Փաուլիի դեմ (3-0): Զարմանալի մրցում մըն էր Զոֆենհայմ - Վերտըր Պրեմըն մրցումը: Զոֆեն-



հայմ շատ յաջող ձեւով սկսած էր այս մրցումին՝ նշա-նակելով 3 կոլ առաջին 12 վայրկեաններուն: 18-րդ վայրկեանին ամեն ինչ փոխուեցաւ, երբ ֆրանսացի պաշտպան Սթանիլ Էնաքի վտարուեցաւ դաշտէն: Մինչեւ կիսախաղ արդէն իսկ «կանաչները» կրցած էին հաւասարիլ, եւ 49-րդ վայրկեանին դանիացի Ենս Սթակը ամբողջացուց իր հեթ թիւիը՝ նշանակելով Պրեմընի 4-րդ եւ յաղթանակի կոլը:

Ստորեւ՝ 5-րդ հանգրուանի արդիւնքները. Տորթմունտ - Պիսու 4-2 Մեոնշընկլատպախ - Ունիոն Պերլին 1-0



Մայն - Զայտընհայմ 0-2 Վոլֆսպուրկ - Շթուբլարթ 2-2 Ֆրայպուրկ - Չանքթ Փաուլի 0-3 Ռեալ Պուլ Լայփցիկ - Աուլզպուրկ 4-0 Պայերն Միւնիխ - Պայեր Լեւերքուզըն 1-1 Զոլլէրն Զիլ - Այնթալթա Ֆրանքֆորթ 2-4 Զոֆենհայմ - Վերտըր Պրեմըն 3-4

ԴԱՍԱՌՈՐՈՄ	ԿԵՏ
1.- Պայերն Միւնիխ	13 (17-4)
2.- Այնթալթա Ֆրանքֆորթ	12 (11-6)
3.- Լայփցիկ	11 (8-2)
4.- Պայեր Լեւերքուզըն	10 (14-10)
5.- Տորթմունտ	10 (11-9)
.....	
16.- Զոֆենհայմ	3 (4-3)
17.- Պիսու	1 (8-11)
18.- Զոլլէրն Զիլ	1 (6-8)

Իտալիոյ «Սերի Ա.»-ի 6-րդ հանգրուանի մրցում-ներուն, Նափոլի գրաւեց պարագլուխի դիրքը՝ 2-0 արդիւնքով յաղթելէ ետք Մոնցալի, օգտուելով Թորի-նոյի պարտութենէն՝ Լազիօ Ռոմայէն (2-3):

Ստորեւ՝ 6-րդ հանգրուանի արդիւնքները. Ա. ՍԷ. Միլան - Լեյէ 3-0 Ռոտինգէ - Ինթեր Միլան 2-3 Ճենովա - Եուվենթուս 0-3 Պոլոնիա - Աթալանթա 1-1 Թորինօ - Լազիօ Ռոմա 2-3 Ա. Ես. Ռոմա - Վենեցիա 2-1 Զոմօ - Վերոնա 3-2 Եմփոլի - Ֆիորենթինա 0-0 Նափոլի - Մոնցա 2-0

ԴԱՍԱՌՈՐՈՄ	ԿԵՏ
1.- Նափոլի	13 (11-4)
2.- Եուվենթուս	12 (9-0)
3.- Ա. ՍԷ. Միլան	11 (14-7)
4.- Ինթեր Միլան	11 (13-7)
5.- Թորինօ	11 (10-8)
.....	
18.- Վենեցիա	4 (4-10)
19.- Մոնցա	3 (4-8)
20.- Զալիարի	2 (1-8)

Սպանիոյ «Լա լիկա»-ի 8-րդ հանգրուանի ծիրին մէջ, բաւական հաւասարակշռուած մրցումի մը ըն-թացքին Աթլետիքօ Մատրիտ 1-1 արդիւնքով հաւա-սարութիւն մը խլեց Ռեալ Մատրիտէն: Միլիթաօ քա-ռակուսիին մէջէն նշանակեց Ռեալ Մատրիտի կոլը՝ 64-րդ վայրկեանին, մինչ Աթլետիքօ հաւասարեցաւ 95-րդ վայրկեանին, երբ իրաւարարը օֆ-սայտ նկատած էր կոլը, սակայն ՎԱՐ-ի ստուգումէն ետք կոլը վաւերացուեցաւ:

Շարք՝ էջ 8

ԻՆԹԵՐ ԵՒ ԹՈԹԵՆՅԱՍ ԿՐԸՆ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՎ ՓՈԽԱՆԱԿՈՒԻԼ

«Սերի Ա.»-ի ախոյեան Ինթեր Միլան հետաքրքըր-ւած է Թոթենհամի բերդապահ Կուլեմօ Վիքարոյով, մինչ Թոթենհամ հետաքրքրուած է Ինթերի ֆրանսա-ցի պաշտպան Պենճամեն Փաւարտի ծառայութե-ամբ:

Ըստ «Կոլ» կայքին, ակումբները յառաջիկայ ամ-րան կրնան փոխանակուիլ մարզիկները: 28 տարե-կան Փաւարտ Պայերն Միլնիիսի պաշտպան էր եւ կարողութիւն ունի կեդրոնի եւ ծայրի յետասպահ դիրքերուն վրայ խաղալ:

27 տարեկան Վիքարիոյի փոխանցման արժեքը կը գնահատուի 35 միլիոն եւրոյով, մինչ Փաւարտի արժեքը՝ 50 միլիոն եւրոյով:



«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆԵ»-Ը Կ'ՈՂՁՈՒՆԵ ԼԱՐՈՎԻ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ, ՍԱԿԱՅՆ Կ'ՈՒԶԷ, ՈՐ ՌՈՒՄԻԱՆ
ԶՕՐԵՐԸ ԴԵՌԱՅՆԵ ԱՔԻԱԶԻԱՅԵՆ
ԵՒ ԴԱՐԱՎԱՅԻՆ ՕՍԵԹԻԱՅԵՆ»

Կ'ԸՍԵ ԶԱԼԱԾԷ

Վրաստանի իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը դրական գնահատած է Աթխազիոյ եւ Զարաւա- յին Օսեթիոյ հետ հաշտեցման գաղա- փարը, որ արտայայտած է Ռուսիոյ ար- տաքին գործոց նախարար Սերկէյ Լաւ- րովը, սակայն միեւնոյն ժամանակ կոչ կ'ուղղէ ռուսական ուժերը այս շրջան- ներէն դուրս բերելու: Այս մասին կը հաղորդէ «Տօչէ Վելլէ»-ն:

«Այն, որ Ռուսիան կ'ողջունէ հաշ- տեցումը եւ պիտի նպաստէ անոր, ան- շուշտ, դրական է, սակայն ես կ'ըսեի, որ այս յայտարարութիւններէն ետք լաւ պիտի ըլլար արդիւնաւետ քայլերու ձեռնարկել», ըսած է «Վրացական երազանք»-ի ընդհանուր քարտուղար Զախա Զալաժէն:

Ան նշած է. «Վրաստանի «տարածք- ներու որոշակի հատուածին մէջ, որոնք բռնագրաւուած են, այսօր ռուսական ռազմակայաններ տեղակայուած են»:

«Ուստի, այդ յայտարարութիւննե- րուն զուգահեռ, լաւ պիտի ըլլար սկսիլ մշակել այդ բանակային ստորաբաժա- նումները Վրաստանի տարածքէն դուրս բերելու գործողութիւններու ծրագիր», ռուսամտութեան յանցան- քով մեղադրուող իշխող կուսակցու- թեան ղեկավարի խօսքերը մէջբերած է «Մթաւարի» հրատարակութիւնը:

Վրացական ընդդիմութիւնը Լաւրո- վի խօսքերը սադրանք նկատած է:

«Լաւրով, ի հարկէ, կը հաստատէ իր յայտարարութեամբ, որ կը համագոր- ծակցի «Վրացական երազանք»-ի եւ Պիժնիա Իվանիշվիլիի հետ: Վրաստա- նի իշխանութիւններուն համար անելի մեծ ամօթ չի կրնար ըլլալ», ըսած է ընդդիմադիր երեսփոխան Թամարա Զորճայան:

Ռուսիոյ արտաքին գործոց նախա- րար Սերկէյ Լաւրով մէկ օր առաջ ՄԱԿ-ի Ընդհանուր Ժողովի 79-րդ նստաշրջա- նի Բարձր մակարդակի շաբթուան նուիրուած մամլոյ ասուլիսի ընթացքին ըսած էր, որ Ռուսիան պատրաստ է



աջակցելու Վրաստանի՝ հարաւային Օսեթիոյ եւ Աթխազիոյ հետ յարաբե- րութիւններու կարգաւորման հարցին մէջ:

Ան նշած է, որ Մոսկուան պատ- րաստ է օգնելու, եթէ բոլոր կողմերը շահագրգռուած ըլլան հաշտեցման եւ «յարձակելու մասին համաձայնու- թիւնները ապահովելու հարցին մէջ»:

«Այնչափ է, որ Վրաստանի ներկայ ղեկավարութիւնը ազնիւ կը գնահատէ անցեալը: Անոնք ըսին, որ պատմական հաշտութիւն կ'ուզեն: Թէ ի՞նչ ձեռով, ի՞նչ ձեռքովով կրնայ այդ հաշտեցու- մը ըլլալ, պետք է որոշեն երկիրները՝ թէ՛ Աթխազիան, թէ՛ Զարաւային Օսե- թիան», ըսած է Լաւրով:

Վրաստանի վարչապետ Իրաքլի Զոպախիժէ ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի ընթացքին իր արտասանած խօսքին մէջ դիմած էր Աթխազիոյ եւ Զարաւա- յին Օսեթիոյ բնակիչներուն՝ կոչ ուղղե- լով ապրելու «մէկ վրացական պետու- թեան մէջ»:

Անոր համաձայն, Վրաստանը պետք է «վերականգնէ բոլոր քաղաք- ական կամուրջները»: Սեպտեմբերի սկիզբին «Վրացական երազանք» կու- սակցութեան հիմնադիր Պիժնիա Իվա- նիշվիլին յայտարարած էր, որ եթէ իր կուսակցութիւնը խորհրդարանական ընտրութիւններուն յաղթէ, Թիֆլիսը ուժ պիտի գտնէ օսեթիւ ներդրութիւն խնդրելու 2008 թուականի զինուորա- կան տագնապին համար:

ԹՐԱՄՓ. «ՊԱՅՏԸՆ ՄՏԱԽՈՐ ԹԵՐԱՃ ԴԱՐՁԱԾ Է, ԻՍԿ ԶԱՄԱԼԱՆ ԱՅԴՊԻՍԻՆ ԾՆԱԾ Է»

Միացեալ Նահանգներու նախկին նախագահ Տանըլտ Թրամփ Ռիսքան- սելի մէջ նախընտրական հաւաքի ըն- թացքին իր արտասանած խօսքին մէջ Միացեալ Նահանգներու փոխնախա- գահ Զամալա Զարիսը եւ Սպիտակ տան ներկայ ղեկավար Ծօ Պայտընը մտային թերաճ կոչած է:

«Ծօ Պայտընը մտային թերաճ դար- ձած է, Զամալան ալ այդպիսին ծնած է», ըսած է ան:

Թրամփի համաձայն, միայն մտա- յին թերաճ մարդիկ կրնան իրականացը- նել ներգաղթի քաղաքականութիւնը, որուն պատճառով այսօր Միացեալ Նահանգները կը տուժեն:

Զարիս իր կարգին Լաս Վեկասի մէջ ընտրական հաւաքի ժամանակ յայտ- նած է, որ Թրամփ անօրինական ներ- գաղթի խնդիրը կ'օգտագործէ բացա- ռապէս նախընտրական նպատակնե-

րով եւ ի վիճակի չէ զայն լուծել: «Ասոնք լուրջ խնդիրներ են, եւ մենք գիտենք, որ Տանըլտ Թրամփը գանոնք պիտի չլուծէ», ըսած է Զարիս:

Ան միեւնոյն ժամանակ յիշեցուցած է, որ նախապէս Միացեալ Նահանգնե- րու Ներկայացուցիչներու տան հան- րապետականները, ինչպէս կը նշէին լրատուամիջոցները, Թրամփի ճնշու- մին տակ չաջակցեցան Ծեռակոյտին մէջ երկու կողմէ համաձայնեցուած օրինագիծին՝ սահմանին միջոցառու- ները խստացնելու վերաբերեալ:

«Տանըլտ Թրամփ ընթացք չէ տը- ւած այս օրինագիծին՝ նկատելով, որ օրէնքի որդեգրումը միայն պիտի վնա- սէ իրեն, եւ զայն լուծելու փոխարեն նախընտրած է այդ խնդիրը օգտագոր- ծել նախընտրական պայքարին մէջ», նշած է Զարիս:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱԶԱՆԳՆԵՐ ՄԵԿՆԱԲԱՆԱԾ ԵՆ ԹՈՒՐԵՈՅ
ՊՐԻԶՍ-ԻՆ ԱՆՂԱՄԱԿՅԵԼՈՒ ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Թուրքիոյ մէջ Միացեալ Նահանգնե- րու դեսպանատունը, մեկնաբանելով ՊՐԻԶՍ-ին միանալու Անգարայի մտադրութիւնը, ըսած է, որ երկիրը կըր- նայ յարաբերութիւններ հաստատել որու հետ որ կ'ուզէ, սակայն Ուաշինկ- թըն վստահ է ՕԹԱՆ-ի իր դաշնակիցին հետ երկկողմանի յարաբերութիւննե- րուն մէջ: Այս մասին կը հաղորդէ «ՌԻԱ Նովոսթի»-ն:

«Թուրքիան գերիշխան եւ անկախ պետութիւն է: Ան կրնայ կապեր հաս- տատնել որուն հետ որ կ'ուզէ:

«Մենք վստահ ենք Թուրքիոյ հետ մեր երկկողմանի պաշտպանական յա- րաբերութիւններուն» իբրեւ ՕԹԱՆ-ի ուժեղ գործընկերոջ:

Ռուսիոյ նախագահի օգնական Եու- ռի Ուշաքով նախապէս յայտնած էր, որ Թուրքիան ՊՐԻԶՍ-ին լիիրաւ անդա- մակցութեան դիմում ներկայացուցած է, եւ անոր դիմումը պիտի քննարկուի:

Անոր համաձայն, Թուրքիոյ նախա- գահ Ռեճեփ Թայիփ Էրտողան ընդու- նած է ՊՐԻԶՍ-ի վեհաժողովի մասնակ- ցելու հրաւերը:

ՅԱԿՈՔ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ. «ՊԷՏՔ Է ...»

Շարունակուած Ա. Էջէն

առիթն է», Մայր աթոռ Ա. Էջմիածինի մէջ լրագրողներու հետ զրոյցին նշած է ԶՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան:

Ամէն հայու փափաքն է ներկայ զըտ- նուիլ այստեղ, եւ ուրախ եմ, որ վեհա- փառն այդ հնարաւորութիւնը մեզի ըն- ձեռեց: Մենք ամէն ինչ պիտի ընենք, որ հայ եկեղեցին միշտ ամուր մնայ եւ իր

կուրայատուկ տեղը ունենայ մեր ազգա- յին կանցքին մէջ:

Ազգային գաղափարներու շուրջ պետք է համախմբուինք, բայց ատիկա հիմնուած է սկզբունքներու վրայ, որոնցմէ ամէնէն կարեւորը ազգային ժողովրդին եւ իր գործուր բանակը», ըսած է ԶՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ՕԴՈՒԺԸ 7-ՐԴ ՕՐԵ...

Շարունակուած Ա. Էջէն

Եապուս սահմանային անցակէտին վրայ: «Հա- տաս» հաղորդեց, որ արշալոյսին տեղի ունեցած յարձակումը թիրախաւորած է բնակարան մը, ուր Զըզպալլայի անդամներ կը բնակէին: Նահատակ- ւած են Զըզպալլայի փոխադրութեան պատաս- խանատուն եւ անոր վարորդը:

Իսրայէլեան օդուժը երէկ բուռն յարձակումներ գործեց Պաալպեքի շրջանին վրայ:

Իսրայէլեան բանակի ծայնասփիռի կայանը հաղորդեց, որ իսրայէլեան բանակը վնասագեր- ծած է անօդաչու թռչող սարք մը, որ դէպի Զարիշ քարիւղի դաշտի հորատման հարթակ կ'ուղղուէր:

Մինչ այդ, իսրայէլեան բանակը շարունակեց Լիբանան ներխուժելու իր պատրաստութիւնները: Ապահովական աղբիւր մը իսրայէլեան «Ուալլա» կայքին յայտնեց. «Ուժերը հիւսիսային ճակատին վրայ կը կուտակուին եւ կը պատրաստուին Լիբա- նան մուտք գործելու: Զաղաքական եւ զինուորա- կան մակարդակներու վրայ միաձայնութիւն գոյու- թիւն ունի, թէ Լիբանան ներխուժումը ժամանակի հարց է»:

Ապահովական աղբիւր մը կայքին յայտնեց, որ իսրայէլեան բանակը «հարաւային Լիբանանի եւ շրջանին մէջ փոփոխութիւններ կատարելու հա- մար գործողութիւններու նոր ծրագիրներ կը պատ- րաստէ»:

«Նախքան ցամաքային ներխուժումը Զըզպալ- լայի պատրաստութիւններուն, մասնաւորաբար «Ռատուան» ուժին մասին հետախուզական տե- ղեկութիւններ կը հաւաքենք», ւալցուց ան:

Ամերիկեան «Ուոլ Սթրիթ Ճըռնլը» օրաթերթը եւս հաղորդեց, որ Իսրայէլ իր ուժերը կը կուտակէ Լիբանանի հետ սահմանին մօտ ցամաքային հա- ւանական գործողութիւն մը շղթայագերծելու հա- մար:

«Հարաբեց» իր կարգին հաղորդեց. «Իսրայէլ- Եան բանակի հիւսիսային հրամանատարութենէն բարձրաստիճան պատասխանատուներ ճնշում կը գործադրեն Լիբանանի ցամաքային ներխուժումը սկսելու համար»:

Ամերիկացի պաշտօնատար մը «Ուաշինկթըն Փոսթ»-ին յայտնած է. «Իսրայէլ Միացեալ Նա- հանգներուն յայտնեց, թէ կը ծրագրէ Լիբանանի մէջ սահմանափակ ցամաքային գործողութիւն մը, որ շուտով պիտի սկսի»: Պաշտօնատարը նաեւ նշեց. «Իսրայէլի ծրագրած ցամաքային գործողու- թիւնը 2006 թուականին Զըզպալլայի դէմ անոր պատերազմէն անելի փոքր պիտի ըլլայ»:

«Իսրայէլեան ցամաքային հաւանական գործ- ղողութիւնը կը կեդրոնանայ սահմանին վրայ Զըզ- պալլայի ենթակառոյցներու վերացման վրայ», ըսած է ամերիկացի պաշտօնատարը:

Աղբիւրներ «Ճերուզալէմ Փոսթ»-ին յայտնեցին, որ ցամաքային գործողութեան յետհաշուարկը

ԼԻՎԸՐՓՈՒԼ ԳՐԱԽԵՑ «ՓՐԵՄԻԵՐ ԼԻՎ»-Ի...

Շարունակուած 7-րդ էջէն

Օր մը առաջ, Պարսելոնա տարեշրջանի իր առա- ջին պարտութիւնը կրած էր Օսասունայէն, որ 7-րդ դիրքը կը գրաւէ: Պարսելոնա կը խաղար առանց իր ծայրի յառաջապահ զոյգին՝ Ռաիֆիւնայի եւ Եամալի, անելի հանգիստ ձգելու «Զմափիլընգ լիկ»-ի մրցումին համար (Եանկ Պոյգի դէմ):

Ստորեւ՝ 8-րդ հանգրուանի արդիւնքները.	
Վայատոլիտ - Մայորքա 1-2	
Խեթաֆէ - Վալենս 2-0	
Ռայօ Վայքեանօ - Լեդանես 1-1	
Ռեալ Սոսիետատ - Վալենսիա 3-0	
Օսասունա - Պարսելոնա 4-2	
Սելթա Վիկօ - Ժիրոնա 1-1	
Աթլետիքօ Պիլպաօ - Սելիա 1-1	
Պեթիս - Եսփանիոլ 1-0	
Աթլետիքօ Մատրիտ - Ռեալ Մատրիտ 1-1	

ԴԱՍԱԽՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Պարսելոնա	21 (25-9)
2.- Ռեալ Մատրիտ	18 (17-6)
3.- Աթլետիքօ Մատրիտ	16 (12-4)
4.- Աթլետիքօ Պիլպաօ	14 (12-8)
5.- Մայորքա	14 (8-6)
.....	
18.- Վալենսիա	5 (5-13)
19.- Վայատոլիտ	5 (4-17)
20.- Լաս Փալմաս	3 (8-13)

Ֆրանսայի «Լիկ 1»-ի 6-րդ հանգրուանի մրցումնե- րուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները. Օքսեռ - Պրետօ 3-0 Փարիզ Սեն ժերմեն - Ռենն 3-1 Լանս - Նիս 0-0 Լը Զաւր - Լիլ 0-3 Մոնպօ - Մոնպելիէ 2-1 Թուլուզ - Լիոն 1-2 Անժէ - Ռենն 1-3 Նանթ - Սենթ Էթիեն 2-2 Սթրազպուրկ - Մարսէյ 1-0

ԴԱՍԱԽՈՐՈՒՄ	ԿԵՏ
1.- Փարիզ Սեն ժերմեն	16 (20-5)
2.- Մոնպօ	16 (12-3)
3.- Մարսէյ	13 (15-7)
4.- Ռենն	11 (10-8)
5.- Լիլ	10 (11-7)
.....	

սպասուածէն անելի արագ կ'ընթանայ՝ նշելով, որ Իսրայէլի պաշտպանութեան նախարարի շուտով հրասայլերու օգտագործման նախատեսելուն վե- րաբերեալ յայտարարութիւնը Իսրայէլի մտադրու- թիւնը յայտարարող իսկական հաղորդագրու- թեան համագոր է:

Աղբիւրները «Ճերուզալէմ Փոսթ»-ին յայտնած են, որ ցամաքային ներխուժման տարողութեան մասին որոշում չէ տրուած եւ կը նախատեսուի, որ հարաւային Լիբանանի մէջ բաժիններով սահմա- նափակուի:

Լաւատեղեակ աղբիւրներ «Ուոլ Սթրիթ Ճըռ- նըլ»-ին յայտնեցին. «Իսրայէլ Լիբանանի մէջ լայ- նածաւալ ներխուժում չըղթայագերծելու առումով Միացեալ Նահանգներու կողմէ մեծ ճնշումներու կ'ենթարկուի:

Ամերիկեան «Փոլիթքօ» օրաթերթը հաղորդեց, որ Միացեալ Նահանգներ կ'ամրապնդեն Միջին Արեւելքի մէջ իրենց զինուորական ներկայութիւնը՝ առ ի պատրաստութիւն բռնարարքներու հաւա- նական մագցումին:

Ամերիկեան բանակը նախապէս յայտարարած էր, թէ որոշած է Միջին Արեւելքի մէջ իր օդային աջակցութեան կարողականութիւնը ամրապնդել եւ իր կարգ մը ուժերը պատրաստ վիճակի մէջ դրած է տեղակայուելու շրջանին մէջ, ինչպէս նաեւ Իրանը զգուշացուց տագնապին ծիրը ընդլայնելէ:

Միացեալ Նահանգներու պաշտպանութեան նախարարութեան բանբեր Փաթրիք Ռայտըր յայտնեց. «Միացեալ Նահանգներ վճռական են արգելք հանդիսանալու Իրանին, անոր գործըն- կերներուն եւ գործակատարներուն կողմէ կացու- թեան շահագործման կամ տագնապին ընդլայն- ման»:

«Եթէ Իրանը, անոր գործընկերները կամ գոր- ծակատարները այս պահի շահագործեն թիրա- խաւորելու շրջանին մէջ անձեր կամ ամերիկեան շահեր, ապա Միացեալ Նահանգներ անհրաժեշտ բոլոր քայլերը պիտի որդեգրեն իրենց քաղաքացի- ները պաշտպանելու համար», զգուշացուց Ռայ- տըր:

Միւս կողմէ, լաւատեղեակ աղբիւրներ բրիտա- նական «Ֆայնենշըլ Թայմզ» օրաթերթին յայտնե- ցին. «Զըզպալլայն տակաւին չընկալեց իր կրած վնասներուն տարողութիւնը, մինչ անոր հաղոր- դակցութեան կապերը քայքայուած են, եւ օդային յարձակումները կը շարունակուին»:

«Զըզպալլայն կարիք ունի իր ընդհանուր քար- տուղար Զասան Նասրալլայի սպանութեան հա- կադարձութեան նախագծման սկսիլ», օրաթեր- թին նշեց լաւատեղեակ աղբիւր մը՝ շեշտելով. «Զասան Նասրալլայի սպանութեան Զըզպալլայի հակադարձութիւնը մինչեւ հիմա կատարած որեւէ բանէն անելի բուռն պիտի ըլլայ»:

ԿԼԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ
ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿՈՅ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ
ԿԵԳՐՈՒՆԻ ՎԵՐԱՄՈՒՏ
2024-2025

ՆՍՕՏՏ Արամ Ա. վեհափառ հայրապետի օրհնութեամբ, կաթողիկոսարանի Զայագի- տական կեդրոնը պիտի բոլորէ 12-րդ կրթա- կան տարեշրջանը:

- Դասաւանդութիւնները պիտի կատար- ւին եռօրեայ դրութեամբ՝ երկուշաբթի, չորեք- շաբթի եւ ուրբաթ, երկկողեան ժամը 5:00-7:30, կորէն Ա. կեդրոնին մէջ, ֆաւար:
- Լիբանանէն դուրս բնակող ուսանողնե- րուն առիթ պիտի ընծայուի առցանց հետեւելու դասընթացներուն:
- Նոր ուսանողներու արձանագրութիւննե- րը կը սկսին երկուշաբթի, 26 օգոստոս 2024-ին, առաւօտեան ժամը 9:00-1:00 (բացի՝ շաբաթ եւ կիրակի օրերէն):
- Ռուսումը անվճար:
- Վերամուտ՝ երկուշաբթի, 7 հոկտեմբեր 2024, երեկոյեան ժամը 5:00-ին:

ՆՈՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ
ՊԱՐՏԻՆ ԻՐԵՆՑ ԴԵՏ ՈՒՆԵՆԱԼ.

- 1 լուսանկար
- Անձնաթուղթի պատճեն
- Բ. Պաշտպանի կամ անոր համապա- տասխանող վկայականի պատճենը:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հե- ռաձայնել կաթողիկոսարան՝ 04-410001 թիւին:

ԿՐԹԱԿԱՆ-ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵԴՐՈՒՆ
ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ